


ԽՈՐՀՈՂՆԵՐԻ
ՎԵՐԼՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԾՐՑԵՐԸ



352(47)

hi-84

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. Անդրեյսվ.—Սոցիալիստական շինարարության նոր հասազը	6 4.
2. Կուրեյկո.—Կոլխոզի թշնամի	5 >
3. Դրողանտեսական կոմունայի կանոնադրություն	2 >
4. Ստալին.—Պատասխան ընկեր կոլխոզնի կանոնադրություն	5 >
5. Մ. Գիգոյան.—Կոլխոզների մասէն	6 >
6. Վ. Խվանով.—Նոր ետապում	5 >
7. Դյուզատնտեսական արտելի կանոնադրություն	2 >
8. Կնոջ աշխատանքը կոլխոզում	8 >
9. Ա. Անդրեյսվ.—Հյուս. Կովկ. պյուղատնաեսության սոցվերակառուցման խնդիրները	2 >
10. Կալեին.—Դնչակե կազմակերպել և վարել կաթնամանեսությունը կոլխոզներում 8 >	
11. Ա. Անդր.՝ Սոցիալիստական շինարարության գոտում	8 >
12. Հյուս. Կովկ. Ենթակա ծխախոսագործական միության դիմումը	2 >
13. ՀԿ(բ)Կ Կենակումը աշխատանքը (ընկ. Պորշչիովի զեկուցումը)	15 >
14. Ա. Հովհաննիսիան. յերդ մարտական փորձի (բանաստեղծություններ)	20 >
15. Հյուս. Կովկ. յերկրային 6 կուսկոնքերենցիայի բանաձները	8 >
16. Զարգացրեց կենդանաբուծությունը կոլխոզներում	15 >
17. Ենթապատգորենի կուլտուրան Հ. Կ.	6 >
18. Միիօւլա.՝ Դեպի նոր կենցաղը կոլխոզներում	5 >
19. Սկսություն.՝ Պաշտպանեցիք անասուններին վարակումից	5 >
20. Թօլգովիսի.՝ Առաջին ոգնություն հիվանդացած գյուղ. կենդանիներին	6 >
21. Հնդամյակի յերրորդ տարվա շեմքին	16 >
22. Դյուզատնտեսական միասնական հարկը և գ. ա. սոց. վերակառուցումը	10 >
23. Յա. Տելենով—Լնչակե կազմակերպել խոշոր կոլխոզի անտեսությունը և նրա վարչությունը 1-ին պրակ	8 >
24. Նույնը, 2-րդ պրակ	4 >
25. Ա. Պ. Բասանջյան—Անասնաբուժական կոլխոզի և նրա մասնաճյուղերի կառավարումը	20 >

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՈՒԵՆ

1. Հյուսիս. Կովկ. հայ պրոլետարուներից՝ Աշուա Լուսենցի բանաստեղծությունները .	
2. Հյուս. Կովկ. հայկ. պրոլետարուների ասսոցիացիայի անդամների գրվածքները	
3. Խնչակե կազմակերպել խոշոր կոլխոզի մանաւութ. և նրա վարչությունը—3-րդ պր.,	
4. 16-րդ կուսամագումաքի արդյունքները	
5. Հյուսիսային Կովկասի հնդամյակը.—արդյունաբերություն .	
6. Խողաբանածության կազմակերպումը կոլխոզում:	
7. Կերի հարցը և սիլսացումը	
8. Կենդանաբուծության ավագ բանվորների պարտականությունները .	
9. Ձեռնարկ ծխախոսագործության համար .	
10. Ցաղարաբուծություն .	
11. Թռչնաբուծություն .	
12. Աշխատանքի կազմակերպումը յեզ յեկամաների բաժմանումը կոլխոզում: Հավաքայի կոլխոզների փորձը Հյուս. Կովկասում:	
13. Տրանսպորտը և կարիչը. աելինիկական ձեռնարկ .	
14. Կամսումը և կուսակցության խնդիրները:	
Պիմիկ՝ Ռոստով Կ-Դ., Բուդենովսկի պր., 60, Կրայնացիզատ,	

352(47)

Խ-84

Պարկավանդներ բոլոր յերկների, միացե՛ք 639

ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՎԵՐԼՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Թարգ. Հ. Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒ
ՏՈՒԹՅՈՒՆ
Ակադեմիա Խայ
ՀՀ ՀՀ ՀՀ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՐԱԾՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՑԵՐԿՎԱՅԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Պ-ՊՍՏՈՎ. - Գ-Պ

1930 թ.

39.897

3.05.2013

ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՎԵՐՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ—
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱ ՅԵ

Практические вопросы перевыборов советов

Перевод из журнала „Путь Советов“ № 19—20

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

КРАЙНАЦИЗДАТ



60100-66

Газетно-книжная типография Севкавполиграфб'единения Ростов на Дону.
Крайлит № 8-1210

заказ № 1069

тираж 1500

Յեռանդուն նախապատրասությամբ, բանվորական, կոլխոզային յեկ չփափոր - միջակ մասսաների ակտիվության գորահավաքով, չփափորության կազմակերպութով, կուլակի յեկ նրա ազենուրայի դեմ վճռականորեն պայքարելով — ապահովենք դասակարգայնորեն տնկուն խորհրդների ընտրությունները

Ա. Գ. Ս. Ր Ս Կ Ե

ՍՊՅԱՀԻՍՏԱԿԱՆ ՃԱՎՈԼՎԱԺ ՍԹԱԶԽԱՊԱՅԱՅՄԱՆ ԴՐՈՁԻ ՏԱԿ

Խորհրդային Միությունը, ուրեմն նաև Հյուսիսային Կովկասյան յերկրամասը — սկսում են կարևորագույն քաղաքական կամպանիայի — խորհրդների վերընտրությունների անցկացումը:

Խորհրդների — պրոլետարական դիկտատուրայի որգանների վերընտրությունները միշտ յեղել են կուսակցության և քանչփոր դասակարգի կարևորագույն հոգաբ: Խորհրդների ղեկավարությամբ Խորհրդային Միության աշխատավորները ջարդ ու փշուր արին ներքին բուրժուա-կալվածատիրական հականեղափոխությունը. Խորհրդների գլխավորությամբ պրոլետարիատը գյուղացիական չքափոր-միջակ հիմնական մասսաների հետ յերկրը դուրս բերեց աղքատությունից ու քայլքայումնեց, մեր յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակերտման բնագավառում, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց մեծ հաջողություններ. Խորհրդները, վորոնց ղեկավարում է կոմունիստական կուսակցությունը, մեր յերկրը տանում են կապիտալիզմի վերջին մացորդների դեմ սոցիալիզմի ծավալված հարձակման ճանապարհով:

Կամպանիայի լողունգներն ու բովանդակությունը պետք է վորոշվեն մեր առաջ կանգնած ինդիրներով, Խորհրդային Միության ներքին և միջազգային պայմաններով:

Վերջին վերընտրություններից մինչև հիմա, վերջին մեկ ու կես—շ տարում յեղել են նշանակալից փոփոխություններ ու տեղաշարժեր թե ԽՍՀՄ հասարակական-տնտեսական պայմաններում և թե մեզ շրջապատող կապիտալիստական աշխարհի դրության մեջ:

Ըստրական կամպանիան պիտի անցնի այնպիսի պայմաններում, վորոնք խիստ տարբերվում են անցյալ ընտրությունների պայմաններից: Կապիտալիստական աշխարհը, նրա ամբողջ սիստեմն ընդգրկված են տնտեսական ծանր ճգնաժամով: Այդ ճգնաժամն առում և սրում ե կապիտալիստական յերկրների հակասությունները: Դրա հետ մեկտեղ, կան վիթխարի հաջողություններ Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում: Պարզ է, վոր այս բոլորն ուժեղացնում ե միջազգային կապիտալի գրոնները և ճնշումները ԽՍՀՄ դեմ, ուժեղացնում ե Խորհրդային Միության դեմ պատերազմելու նախապատրաստությունը:

Կուսակցական, խորհրդային, կոմյերիտական, արհեստակական կազմակերպությունները պետք ե լայնորեն ծավալեն աշխատանքը և պատմեն Հուսիսային կովկասի բանվորներին, կոլխոզնիկներին և չքավոր-միջակ մասսաներին մեր միջազգային գրության նոր գժվարությունների մասին (մասնավորապես խորհրդային եքսպորտի գեմ վերջին արշավանքի մասին), զորահավաքեն ուշազրությունը գեպի յերկրի պաշտպանության հարցերը, ուժեղացնեն հոգատարությունը գեպի Կարմիր բանակը, ուժեղացնեն զինվորական պատրաստության, Պաշտուակայիմի շարքերի աճման և ամրապնդման աշխատանքը:

Սոցիալիստական շինարարության բնագավառում մեզանում ձեռք են բերվել նշանակալից հաջողություններ թե ինդուստրացման և թե գյուղատնտեսության սոցիալիստական վերակերտման մեջ: Այդ, ինքն ըստ ինքյան հասկանալի յե, և զու մի կերպ չպիտի նվազեցնի այն ճեղքվածքների նշանակությունը, վորոնք կան յերկրամասում, մեր աշխատանքի մի շարք ճյուղերում—հացամթերման պլանի վոչ, ամբողջովին կատարումը, աշխատանքի արտադրողականության և ինքնարժեքի ի-

շեցման բնագավառում պլանային առաջադրությունների թերակատարումը և այլն:

Մեր յերկիրը մոտեցել ե արտադրության այնպիսի մակարդակի, յերբ 1931 թվականին՝ արտադրանքի միայն վերաճումը հավասար կլինի նախապատերազմյան արդյունաբերության ամբողջ տարեկան արտադրանքին: Ավարտված ե մի շարք արդյունաբերական հսկաների (Սելմաշ, Տրակտորստրոյ և այլն) շինարարությունը, ծավալվում ե նոր, հսկայական ձեռնարկությունների շինարարությունը, աճել ե բանվոր դասակարգի քաղաքական ակտիվությունը, լայնորեն ծավալվում են աշխատանքի նոր, սոցիալիստական ձևերը (սոցմքցություն, հարվածայնություն, հանդիպական արդֆինպլան): Զնայելով կուլակի կատաղի դիմադրության, դասակարգային թշնամու լայն ծավալած աշխատանքին և նրա ձգտումներին—քայլքայել մեր յերկրի տնտեսական գործնեյությունը—պլուետարիատն իր մեջ գրտավ բավականաչափ ույժեր, վնասարարության ծանր հետեւանքները հաղթահարելու համար և հսկառակ աջ ոպորտունիստների նախագուշակություններին, ապացուցեց աշխատանքի բարձր տեմպերի հնարավորությունը, սոցիալիստական շինարարության վերաբերմամբ կուսակցության նշած պլանների համապատասխան լինելը մեր ույժերին և հնգամյակը չորս տարում կատարելու ռեալ լինելը:

Յերկրամասը լայն աշխատանք ե ծավալել գյուղատնտեսության սոցիալիստական վերակերտման համար: Զքափոր-միջակ մասսաները, կուսակցության և բանվոր դասակարգի զեկավարությամբ, հիմնականում մոտենում են չքավոր-միջակ տնտեսությունների համատարած կոլեկտիվացման ավարտելուն: Այս հիմունքով ել տեղի յեն ունենում կուլակության վորպես դասակարգի լիկվիդացիան, կապիտալիզմի վերջին արմատների վոչնչացումը: Գյուղում և ստանիցայում ընդլայնվել ե պրոլետարիատի և կուսակցության սոցիալական բազան:

«Հիմա նոր ձեռվ ե գրվում գյուղում խորհրդային իշխանության հենաբանի հարցը: Այժմյանից կարեղը գույղը հացահատիկային սայոններում գյուղը բաժանվում ե յերկու հիմնական մասի: կոլխոզնիկների, վորոնք հանդիսանում են խորհրդային հշիմանության իսկական և ամուր հենաբանները և վոչկոլխոզնիկների—չքավորներից, վորոնք առաջմ

դեռ չեն ցանկանում մտնել կոլխոզները, բայց վորոնց կոլխոզների մասսայական փորձը, անկասկած, կհամոզե, վոր անհրաժեշտ և համեմատաբար ամենակարճ ժամանակամիջոցներում բռնել կոլեկտիվացման ձանապարհը» (16-րդ կուսհամագումարի վորոշումներից):

Խորհրդների վերընտրությունները պիտի անցնեն հնգամյակի յերրորդ, վճռական տարվա նախորյակին, վորը բանվորդասակարգի, կոլխոզնիկների ու անհատական չքավորմիջակ մտսաների առաջ դժվարագույն խնդիրներ ե դնում: Քաղաքի և դյուզի կուսակցական, խորհրդային և այլ պրոլետարական կազմակերպությունների խնդիրը կայանում ե նրանում, վորպեսզի ապահովեն բանվորական մասսաների, կոլխոզնիկների, չքավորների և անհատական-միջակների ակտիվության նոր աճումը, զորահավաքեն այդ ակտիվությունը աշխատանքի բարձր տեմպերի, ինդուստրացման պլանների լիակատար իրադրժման համար:

Վերընտրական կամպանիան պետք ե ավելի ևս լայնացնե և ամրապնդե կոլխոզինարարության թափն ու աճումը, վորպեսզի առ 1931 թվականի գարնանացանի կամպանիան հիմնականում ավարտվի յերկրամասի համատարած կոլեկտիվացումը: Այս պատճառով պետք ե ընտրել այնպիսի խորհրդներ, վորոնք ապահովեն հետագա վճռական պայքարը կուլակի, վորպես դասկարգի վերացման համար:

Սոցիալիստական շինարարությունը, ամբողջ ֆրոնտով կավիտալիստական տարրերի դեմ հաջողակի հարձակումը առաջեն բերում դասակարգային թշնամու (կուլակի, նեպմանի, վասարարի) կատավել դիմադրությունը: Սոցիալիստական շինարարությունն անցնում ե դասակարգային սրված պայքարի պայմաններում: Ինց այդ նույն պայմաններումն ել պիտի անցնի ընտրական կամպանիան, դասակարգային թշնամին պիտի ծավալե ուժեղ (բացահայտ և ծածուկ) աշխատանք՝ թե նախապատրաստական շրջանում և թե ինց ընտրությունների ժամանակ: Կուլակը, նեպմանն ու վասարարը կիորձեն խորհրդների մեջ անցկացնել իրենց կողմանիցներին, կիորձեն հաշվետու ժողովներում վիճեցնել շինարարության հերթական խընդիրների քննությունը և վերջինս ուղղել դյուզի և քաղաքի յետամասաց խավերի կորդիչ, ցեխային պահանջների կողմը:

Խորհրդները և գործկոմները պետք ե զորահավաքեն պրոլետարիատի, կոլխոզնիկների, անհատական չքավորմիջակ խավերի լայն մասսաներին, համախմբեն նրանց կուսակցության որդանների շուրջը, 16-րդ կուսհամագումարի և Համկոմկուսի (բ) կենտկոմի սեպտեմբերյան դիմումի շուրջը, բարձրացնեն դասակարգային, պրոլետարական արթնությունը, վճռամու յելույթներին:

Կենտգործկոմի և Յերկրգործկոմի կողմից հաշվետու-վերընտրական կամպանիայի վերաբերմամբ սահմանված ժամկետերն և Յերկրգործկոմի գերեկտիվը ընտրությունների մասին՝ պետք ե շարժման մեջ դնեն յերկրամասի բոլոր կազմակերպետը և շարժման մեջ դնեն յերկրգործկոմին, մանավանդ խորհրդներին և գործադիր կոմիտեներին, սահմապատրաստական միջոցառումների ծավալման համար:

Արդեն այժմ աշխատողներից վոմանց մեջ յերեան ե գալիս այնպիսի տրամադրություն, վոր իբր թե դեռ շատ ժամանակ, վոր առայժմ պետք ե շտապեցնել հացամթերումը, ցանքը: Յերկրգործկոմի վորոշումներում նախազգուշացում կացնըք: Յերկրգործկոմի վորոշումների մեջ յերկրամատության մեջ մասին, բոլշևիկյան ցուցմունք նախապատրաստության մեջ մասին և տեմպերի մասին: «Հանձնարարել յերկրային ընտրության համաժամանակովին, մարզային ու ույոնական գործկոմներական համաժամանակերին՝ հոկտեմբերի ընթացքում կատարել ընթացքին մանրակրկիտ ինստրուկտաժ և համապատասխան ընտրական ստորադաս կոմիտեների պատրաստության ստուգում:

Այս նշանակում ե, վոր աշեատանքի տեմպերը պետք ե ապահովեյին բոլոր կազմակերպչական և նախապատրաստական միջոցառումների կիրառումը հոկտեմբերին: Բացի դրանից, Յերկրգործկոմը պարտավորեցնում է գործկոմներին ու քաղլիորդներին՝ այնպես կազմակերպել աշխատանքն ու դասավորել հըրդներին՝ այնպես կազմակերպել աշխատանքն ու դասավորել ույժերը, վորպեսզի հաշվետու-վերընտրական կամպանիան յերկրամասում խթանե ընթացքի տնտեսա-քաղաքական կամպանիայի ընթացքը: Զպետք ե հակագլել մեկը մյուսին, այլ հենց նիւթայի ընթացքը: Զպետք ե հակագլել մեկը մյուսին, այլ համերգանակել այդ կամպանիաներն և ապահովել ցանքի և հացամթերումների հաջող ընթացքը:

Յերկրային և ույոնական մամուլը պետք ե անհապաղ սկսի վերընտրական կամպանիայի հարցերի լուսաբանությունը ժուրնալների ու լրագրների եջերում, ըստ վորում պետք ե

կենտրոնանա նախապատրաստական միջոցառումները մի շարք ընթացիկ տնտեսա-քաղաքական կամպանիաների ուժեղացման և կենտրոնի ու կենտրոնական սեպտեմբերի 3-ի դիմումների իրացման համար ոգտագործելու վրա: Գործադիր կոմիտեները քաղաքային և գյուղական—ստանիցաների և առևների խորհրդները, քաղաքների ու գյուղերի կուսակցական և այլ պրոլետարական կազմակերպությունները պետք ե անհապաղորեն ձավալեն ամենալայն ագիտացիոն կամպանիա, պարզաբանելով վերընտրությունների և սոցիալիստական շինարարության հերթական խնդիրները, զորահավաքելով աշխատավոր մասսաներին ընտրական կամպանիայի շուրջը, ապահովելով բանվորների, կոլխոզների և անհատական չքափոր-միջակ մասսաների ամբողջական մամակցությունը հաշվետու ժողովներին և ընտրություններին: Ընտրական կոմիտիաները, խորհրդներն ու գործկոմները պետք ե այնպես կազմակերպեն ընտրական թաղամասերը, այնպես նշանակեն հաշվետական և ընտրական ժողովների տեղն ու ժամանակը, վորպեսզի ամենալավ կերպով ապահովի ընտրողների մակամալ ընդգրկումն ու սպասարկումը:

Պետք ե իր ժամանակին և լայնորեն հայտարարել ժողովների ժամանակի և տեղի մասին. լոգուսներն ու պլակատները պետք ե զորահավաքեն և կազմակերպեն մասսաներին՝ բոլշևիկորեն կատարելու ընթացիկ խնդիրներն և կուսակցության ու կառավարության փորոշումները: Մասսայական լայն նախապատրաստական ժողովներ անցկացնելու հետ մեկտեղ վատ չեր լինի գործադրել նաև ինդիվիդուալ-խմբակային պարզաբանական աշխատանքի և նախապատրաստության մեթոդներ:

Կուսակցական և խորհրդային կազմակերպություններն առանձին հոգատարություն պետք ե հայտնաբերեն զեկուցողների պատրաստության վերաբերմամբ, գյուղական խորհրդների աշխատանքի վերաբերյալ հաշվետակություններով հանդերձ: Հաճախ այդ հաշվետակությունները հանգում են կայացած ժողովների և քննած հարցերի քանակությանը, ինչպես և ստացված և ծախսված փողերի, հացամթերումների ու ցանքի և այլ հանրագումարների չոր ու ցամաք արձանագրության: Պետք ե հաշողեցնել այնպիսի դրություն, վորպեսզի թվերն ու փաստերը պատկերագրեն, թե արդյոք ի՞նչ ե արել, ի՞նչպես և աշխատել խորհուրդը, ի՞նչպես ե նա ղեկավարել գասակարգային պայքա-

ըր, ի՞նչպես ե ղեկավարել կոլխոզային շինարարությունն և ողնել նրան, ի՞նչպես ե զորահավաքել և կազմակերպել գյուղի խորհրդային հասարակայնությանը՝ սոցիալիստական շինարարության դժվարությունների հաղթահարման խնդիրներն իրագործելու համար: Հարկավոր ե, վորպեսզի հաշվետու զեկուցումը առաջ բերե այն հարցերի ակտիվ քննությունը, վորոնք վերաբերում են խորհրդի, կոլխոզի, գյուղի կյանքին և աշխատանքին: Հիմնական պահանջը, վորը պետք ե ներկայացվի գեկուցողին և ղեկավար կազմակերպություններին, այդ հետևյալն ե. — ապահովել աշխատանքի պրոետարական լայն լինքնաքննադատությունն ու քննադատությունը, վորպեսզի ամբողջ խրստությամբ ի հայտ բերել պակասությունները, կուսակցության ու կառավարության քաղաքականության ու դասակարգային գծի ծոռնությունը և ուղագրությունն ու ուժերն ուղղել դեպի այդ պակասությունների վերացումը, դեպի նրանց կանխումը հետագայում:

Հարկավոր ե, վորպեսզի զեկուցումներն անցնեն ընթացիկ, հերթական տնտեսա-քաղաքական կամպանիաների (հացամթերություններ, ցանք և կոլեկտիվացում, ընդհանուր պարտադիր ուսուցում, գյուղական վճարներ, փոխառություն և այլն) իրագործման բնագավառում խորհրդների աշխատանքի ստուգման նշանաբանով, արդֆինալլաների կատարումը, կոլխոզային շինարարության ղեկավարությունն ու նրան հասցրած ոգնությունն ստուգելու տեսանկյան տակ, ըստ վորում հաշվետակությունների հիմքը պիտի կազմեն ընտրողների նակազները կատարելու վերաբերյալ զեկուցումները:

Անհրաժեշտ ե, վոր հաշվետական ժողովներ անցկացնելիս խորհրդներն ու գործկոմները սպասարկեն ավելի շատ բնակավայրեր, կոլխոզներ, արդյունաբերական ձեռնարկություններ և սովորողներ:

Վորպեսզի ուժեղացնել խորհրդների և անհատականների չքափոր-միջակ մասսաների ուղագրությունը դեպի կոլխոզներաբարության հարցերը և ցույց տալ նրա առավելությունը անհատական տնտեսության հանդեպ, ինչպես նաև հողագործներին կոլխոզների մեջ հետագա ներգրավման համար իրենց, կոլխոզների ագիտացիոն աշխատանքն ուժեղացնելու նպատակով, հաշվետու ժողովներում պետք ե գնել ամենալավ կոլխոզ-

Ների վարչությունների գեկուցումները նրանց աշխատանքի մասին:

Մի այնպիսի լայն մասսայական քաղաքական կամպանիայի հաջողությունը, ինչպիսին եւ ընտրական կամպանիան, նշանակալից չափով պիտի կախված լինի մասսայական աշխատանքի դրվածքից: Քաղաքում և բանվորական ավաններում մասսայական աշխատանքի հենակետեր հանդիսանում են արդյունաբերական-պրոլետարական կենտրոններն ու, կուեկտիվները, վորոնց ոգնությամբ անհրաժեշտ ել լայն չափով կամպանիայի մեջ ներպավել նաև աշխատավորների անկազմակերպ մասսաներին: Գյուղական կազմակերպություններն ամբողջ կամպանիայի ընթացքում պետք եւ հաջողեցնեն գյուղի բարորակ-չքավորական ուժերի բարձր ակտիվությունը և նրանց կազմակերպող ու առաջնորդող դերի բարձրացումը—կոլիոնիկների ակտիվի հետ միասին: Խորհրդների պարտադիր աշխատանքը պիտի լինի՝ բարակ-չքավորական խմբակների և չքավորության ժողովների գումարումը, կարմիր պարտիզանների լայն ներգրավումով հանդերձ—մասնավանդ այնպիսի մեծ հարցերի շուրջը, ինչպիսին են՝ խորհրդների թեկնածությունների ընտրությունն ու քննությունը, ձայնաղուրկների ցուցակների քննությունը և այլն:

Բոլոր կուսակցական, կոմյերիտատական ու խորհրդային կազմակերպությունների հրատապ խնդիրներից մեկը պիտի դառնարանվորների և գեղջկուհիների, բանվոր և կոլխոզային յերիտասարդության ակտիվության բարձրացումը. պետք եւ ապահովել նրանց մասնակցության չափը քաղաքային և գյուղական խորհրդների ընտրական որգանների կազմի մեջ:

Լուրջ ուշազբություն, դաստիարակային հատուկ հստակություն ու հաստատակամություն եւ պահանջում Յերկրգործկոմի դիրեկտիվը ձայնագուրկների ցուցակները կազմելու և այն անձանց հայտնաբերելու մասին, վորոնք ընտրելու և ընտրվելու շունեն: Հրահանգի § 9-ում ասված եւ.—

«Հաշվի առնելով, վոր կուլակային և նեղմանական տարրերը պիտի ձգտեն անտեսել ընտրական որենսգրությունն և ստորին խորհրդային կազմակերպությունների դաստիարակային արթնությունը—պարտավորեցնել բոլոր ընտրական կոմիսիաներին անհապաղորեն սկսել ձայնաղուրկների ցուցակների կազմելը, դրանց կազմելուն և քննությանը լայն չափով ներգրա-

վելով չքավորական խմբակներին և ժողովներին—կարմիր պարտիզանների մասնակցությամբ, կոլխոզնիկների ժողովներին և քաղաքի ու գյուղի (առվի, ստանիցայի) հասարակական կազմակերպություններին»:

Այս գիրեկտիվի կատարումը պահանջում է ընտրական կոմիսիաների այնպիսի կազմ, վորն ապահովեն յերկրային կազմակերպությունների և կառավարության դիրեկտիվների ուղիղ իրագործումը և վերընտրական կամպանիայի դաստիարակայնորեն տոկուն ղեկավարությունը:

Վերընտրությունները պետք ել հայտնաբերեն նոր կազմեր, մասնավանդ հարվածայիններ և նրանց ներգրավեն վոչ միայն խորհրդների աշխատանքի ակտիվ և անսիջական մասնակցության մեջ այլ և նրանցում ղեկավար և պատասխանատու աշխատանքի: Խորհրդային ակտիվի նոր կազմերը, մասնավանդ արդյունաբերական ձեռնարկների, սովորողների ու կոլխոզների հարվածայինները պետք եւ ոեղերվ դառնան պետական ապահովական առաջը բանվորականացնելու համար, պետք եւ առաջին շարքերում լինեն բյուրոկրատական աղճատումների գեմ մղվող պայքարում:

Վերընտրական կամպանիայի ժամանակ պետք եւ ամենայն վճռականությամբ ծավալել քննադատությունն ու պայքարը խորհրդային ապարատի բյուրոկրատիզմի և անկանոնության դեմ, ուժեղացնել նրա մերձեցումը մասսաներին, ամենորյադարձնել բանվորական վերահսկողությունը նրա վրա, վորպեսզի մեր պետական ապարատը ձատությամբ ապահովե դաստիարակային, պրոլետարական գծի կիրառումը և վորպեսզի կանխիլ վասարաբության հնարավորությունն այդ ապարատում:

Ուայոնների գերը, վորպես հիմնական ողակի, վորտեղ լուծվում են սոցիալիստական շինարարության հիմնական խնդիրները, զգալիաչափ աճել ե, մասնավանդ շրջանների լիկվիդացիայի կապակցությամբ: Նշանակալից չափով ուժեղացնել են առևտորհությունների գերը, վորպես գյուղում սոցիալիստական շինարարության հենակետերի: Խնդիրը կայանում է նրանում, վորպետի պահանջմանը վերընտրական կամպանիան ամրապնդել ուայոննական գործկոմներն ու գյուղական խորհրդները—վոչ միայն ի հաշիվ չքավորների, բանվորակության ու կոլխոզնիկների ակտիվին ղեկի աշխատանք ներգրավելու, այլ և ի հաշիվ յերկրային կազ-

մակերպությունների, հիմնարկությունների և յերկրամասի արդյունաբերական-պրոլետարական կենարոնների ուժերով հասցվելիք ոգնության:

Շավալված սոցիալիստական շինարարությունը, դասակարգային թշնամու դիմադրության հետեւանքով դասակարգային պայքարի սրումը ուժեղացնում է աջ տրամադրություններն և աջ թեքումը մեր յերկրում և յերկրամասում: Խորհրդների վերընարությունները պետք է զորահավաքեն բանվոր դասակարգին, կոլխոզնիկներին և չքավորության՝ յերկու ֆրոնտում վրձուականորեն պայքարելու համար—աջ վտանգի դեմ, վորպես հիմնական վտանգի և արոցկիզմի «ձախ» սեցիզիվսերի դեմ: Կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք է ձգտեն քաղաքականապես չեղոքացնել աջերին, վորպեսզի սրանց ազդեցությունն ևս չեղոքացնել աշխատավոր մասսաներից:

Բանվոր դասակարգի և կոլխոզնիկների, անհատական չքարո-միջակ լայն մասսաների քաղաքական և արտադրական ակտիվության աճման, շինարարության բոլոր բնագավառներում նշանակալից հաջողությունների հետ մեկտեղ, տեղ ունի նաև զգալի ճեղք այդ ակտիվության և քաղաքային ու գյուղական խորհրդների կողմից ցույց տրվող դեկավարության միջև: Հաճախ խորհրդները չեն զիսավորում այդ ակտիվությունը, չեն դեկավարում վոչ կոլխոզնարարությունը, վոչ ել բանվորների զորահավաքը արդինապահնի բոլցերիկական կատարման համար: Մի շաբք դեպքերում խորհրդները վոչ միայն չեն զիսավորում պայքարը կուլակության և նրա ագենտուրայի դեմ, այլ և իրենց անգործությամբ և հաշտվողականությամբ աջակցում են դասակարգային թշնամուն, ոգնում են նրան՝ խորհրդների աշխատանքը:

Վերընարական կամպանիան պիտի հանդիսանա բեկման մոմենտ խորհրդների աշխատանքի մեջ: Նոր խորհրդները պետք է գործնականապես զիսավորեն աշխատավորական լայն մասսաների աճող ակտիվությունը, վերակառուցեն աշխատանքի մեթոդները, հնդամյակի յերրորդ տարում յերեսով դառնալով դեպի արդյունաբերության արդինապահների կատարումն ու դեպի կոլխոզարդումը:

Գ. ՍՈՅԵԼԵՒՆՈՎ.

ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Խորհրդների հաշվետու-վերընարական կամպանիան—այդ դասակարգային կավի հրապարակ եւ: Բնդոր աեսակի և ոանգի մեր դասակարգային թշնամիները հեվ-ի-հեվ պատրաստվում են այդ կամպանիային: Նեպմանը, կուլակը, բոլոր տեսակի հոգեվորականները ձեռքից բաց չեն թողնում պայքարի և վոչ մի միջոց: Անցյալ հաշվետու-վերընարական կամպանիաները, մասնավանդ 1928-29 թվականի կամպանիան, տալիս են հարսւստ, փաստական նյութեր մեր թշնամիների գործնեյության մասին: Միանգամայն վոչ լրիվ տվյալների համաձայն, անցյալ հաշվետու-վերընարական կամպանիայում, մեր յերկրամասում յեղել են ժողովները վիճեցնելու 37 դեպքեր, 37 խուլիգանական հարգածակումներ ակտիվիստների վրա, ակտիվիստների աների 5 հրդեհումներ, ակտիվիստների 15 սպանություններ և 10 մահափորձեր, իրենց հակախորհրդային «նակազները» բաց թողնելու մի շաբք դեպքեր, խորհրդների պատգամավորության թեկնածուների կուլակ-նեպմանական ցուցակներ և վերջապես, յեղել են զգալի քանակությամբ փորձեր՝ հաշվետու-վերընարական ժողովների ամբիոններն ոգտագործել կուլակ-նեպմանական «դեկլարացիաներ» արտասանելու համար:

Բերված փաստերը բավականաչափ պերճախոս կերպով համոզում են մեզ, վոր «ինքնահոսի» վրա հույս դնելը, թափթթվածությունը, անձկունությունը, դասակարգային թշնամու մասին մոռանալը անհանդուրժելի և զիսավոր դաշտում միլիոնների գանձական արդյունաբերությունը:

Հաշվետու-վերընարական կամպանիայի ընթացքում միլիոնավոր աշխատավորները ստուգում են խորհրդների և առանձին պատգամավորների աշխատանքը, ընտրում են պատգամավորներ խորհրդների համար և վորոշում են նոր խորհրդների անելիքները համեմատաբար յերկարատև ժամանակամիջոցի համար: Մասսաների ակտիվությունը, ինիցիատիվան, գործարարությունն ընդգրկելու համար անհրաժեշտ և մակսիմալ ուշիմություն, զգնություն, խոհեմություն, ույժերի ժամանակին դասակարգություն այն հաշվեսզի վորպեսզի մասսաների յեռանդն

ու ակտիվությունը չսառչի և նպատակահարմար կերպով ուղղվի համապատասխան հունով:

Հաշվետու-վերընտրական կամպանիայում ամեն մի «լյապուսը»—դա հարված է մասսաների ակտիվության: Ամեն մի ժողովի վիճեցում, ժողովների ժամանակի ու տեղի մասին անձիշտ տեղեկություն և ուրիշ պակասություններ, վորոնք ստիպում են մասսային ժամերով սպասել ժողովին—պիտի ամենալացասական կերպով անդրադառնա կարեռագույն քաղաքական այս կամպանիայի վրա: Իզուր չե, վոր մեր թշնամին իբրև կանոն, առաջին հերթին ձգտում ե վիճեցնել ժողովները. պատահական չե, վոր անցյալ վերընտրական կամպանիայում քիչ չեն յեղել այսպիսի գեպքերը, յերբ մեր թշնամիները, հուսահատվելով իբրենց մարդկանց խորհրդների մեջ անցկացնելու անհնարինությունց, հենց ժողովների ամենատաք ժամանակ հրդեհում ելին տները, կալերը, կամ թե կաշառված, գլխապատռ յենթակուլակին խցկում ելին ժողովները վորոշ ուստանովայով—վիճեցնել ժողովը:

Այս յերկութիւները պատահական չեն: Նրանք յեղել են և անկասկած, մեր թշնամիները կփորձեն վասնել մեզ նաև այս կամպանիայում:

Ավելի ևս վատ ե աղջում ընտրողների վրա ժողովի վիժեցումը կազմակերպչական խառնափնթորության հետևանքով—զեկուցողների ուշանալն ու չներկայանալը, շենքը պատրաստված չինեն և այլն: Այսպիսի գեպքերում մասսան սովորաբար հեռանում ե չարացած և մեծ մասամբ յերկրորդ անդամ հրավիրված ժողովին գալիս են ավելի քիչ ընտրողներ, քան առաջին անդամ:

Հաշվետվական կամպանիայում պակաս նշանակություն չունի նաև զեկուցումների և զեկուցողների վորակը: Սրգեն ճշտությումը սահմանված ե, վոր յերկար, խառնաշփոթ զեկուցումը, վորը ծանրացրած և ավելորդ թվերով և «ընդհանրապես» նվաճումների վերաբերյալ ճռճռան ֆրազներով, ձանձրայնում ե ժողովին և թույլ չի տալիս, վոր ի հայտ բերվի մասսաների ինիցիատիվան: Սովորաբար վերջում, մինչեւ անդամայդպիսի զեկուցման կեսին լսողները կամաց-կամաց փախչում են ծխելու, կամ դեպի տուն՝ հանգստանալու: Իբր կանոն, այդպիսի զեկուցումներից հետո յելույթները քիչ են լինում, յե-

ղածներն ել վատ: Պատահում ե նաև, վոր այդպիսի ֆրազներով լի զեկուցումից հետո ժողովը, ի դժբախառություն զեկուցողի, վորոշում ե.—«ինդրել խորհրդին զեկուցում տալ այն մասին, թե ինչ ե արել մեր խորհուրդը»:

Թվում ե, վոր հաշվետու-վերընտրական կամպանիայում ամեն մի մանր բան ունի հսկայական նշանակություն: Կամպանիայի կարևորությունը ժամանակին չպարզաբանելը, ծանուցազերի անձիշտ առաքումը, զեկուցողների և լիազորների ժամանակին չերկայանալը, ժողովների ձգձգումը կամ վատ կառավարումը, վատ զեկուցումը, հանձնարարվող թեկնածությունների անբավարար քննությունն և, մանավանդ, նրանց բացակայությունը—այս բոլորը հարված ե կամպանիային, այս բոլորը վաստ ե դասնում մեր թշնամիների ձեռքում, վորոնք իբրենց շահերի համար հիանալի կերպով կողտագործեն մեր ամեն մի վրիպումը, մեր թափթփածությունը, քննածությունը, գանդաղարժությունը, ինքնահոսի վրա հույս դնելը:

Առաջիկա հաշվետու-վերընտրական կամպանիան մենք պիտի մղենք բացարիկորեն բարդ և դասակարգային սրված պայքարի պայմաններում: Յեկ մեր դասակարգային թշնամիներն, անկասկած, փորձ կանեն այս կամպանիայում ցույց տալ իբրենց ժանիքները, կաշխատեն առաջին հերթին ոգտագործել նախապատրաստական աշխատանքներում յեղած մեր թերությունները: Նրանք հույս են դնում առաջին հերթին այն բանի վրա, վոր տեղերի մի շարք աշխատողներ հաճախակի մոռանում են այն հանգամանքը, վոր դասակարգային թշնամին ջարգված ե, բայց վոչնչացված չե: Կուլակը և նրա գործակալը—յենթակուլակը, աջ, «ձախ» խոտորիչը այդպիսի աշխատողների քթի տակ հսկայական վաս են հասցնում աշխատանքին:

Վորպեսզի հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում ջախջախիչ հարված հասցնել դասակարգային թշնամիներին և նրանց գործակալներին, վորպեսզի կամպանիան անցնել ամենամեծ հաջողությամբ, կենարոնացնել մասսաների ուշագրությունը, ակտիվությունը, յեռանդն և նախաձեռնությունը սոցիալիստական շինարարության հիմնական ինդիքների վրա, անհրաժեշտ ամարակրիտորեն նախապատրաստվել կամպանիայի անցկացմանը, անհրաժեշտ ե հաշվի առնել, ու-

սումմասիրել անցյալ կամպանիայի պակասություններն և այդպիսիք թույլ չտալ առաջիկա կամպանիայում:

Ինչումն են նախորդ կամպանիայի թերությունների արմատները.—նախ, կամպանիայի կարևորության թերահաշվառումը, անուշագրությունը, դանդաղաշարժությունը, «գուցե»-ի վրա հույս դնելով աշխատելը, դասակարգային թշնամու ույժերի թերահաշվառումը, վերջապես, ինքնահոսի վրա հույս դնելը—«զե», գործը լավ կերթա, ելի, ինչու հոգս քաշելը։ Հետեւ վանքը յեղավ այն, վոր միշերկու տեղ խորհրդները աղտեղվեցին կուլակային և հակախորհրդային տարրերով, ձայնազրկվեցին նրանք, վորոնք յենթակա չեյին ձայնազրկման և ընդհակառակը—ընտրական իրավունք տրվեց նրանց, վորոնց պետք եր զրկել այդ իրավունքից։ Թե մեկը և թե մյուսը քաղաքական մեծ սիրաներ են:

Առաջիկա վերընտրությունների պայմանները, այն գրժվարությունների հետ մեկտեղ, վորոնց մենք կհանդիպենք կամպանիայի ընթացքում, իրակատար հնարավորություն են տալիս կամպանիան անցկացնել քաղաքական մեծ, դրական եփեկտով, քանի այդ յեղել ե անցյալ վերընտրությունների կամպանիայում։ Առաջիկա կամպանիայում մենք պետք ե գործ ունենանք քաղաքի և գյուղի աշխատավոր մասսանների աճած ակտիվության հետ, շինարարության մեջ նրանց վիթխարի ենտուզիազմի, յեռանդի հետ։ Գյուղում մենք ունենք կոլխոզներում կազմակերպված ընտրողների գերազանց տոկոս։ Մեր գյուղական թշնամին—կուլակը, թեև դեռ ևս վոչնչացված չե, բայց արդեն նրա վողնաշարը ջարդուաված ե։ Ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում մենք ունենք քանակապես և քաղաքականապես աճած բանվորական և չքավոր-միջակ ակտիվ, աճած և գոտեալնդված հասարակական կազմակերպություններ և նրանց ակտիվը։ Բոլոր տեսակեաններից լրացիկ և ամրապնդվել են կուսակցության և կոմսոմոլի շարքերը։ Աճել ե գյուղի և քաղաքի աշխատավոր ինտելիգենցիայի խորհրդային ակտիվությունը։ Կուլակային տները կոլխոզներին և կուլտուրական հիմնարկների համար հատկացներու հետևանքով, շատ ու շատ անդամ ավելացել են կամպանիան անհրաժեշտ շենքերով ապահովելու հնարավորությունները։ Ավելացել ե լրագրների թիվը։ Այս բոլորն այնպիսի գործոններ են, վորոնք լիակատար իրա-

փունք են տալիս պահանջելու, վորպեսզի վերընտրական կամ-ը պանիան անցկացվի ամենամեծ դրական արդյունքներով։ Այս պատճառով մեզ հարկանավոր է ակտիվի ուշադրությունը կենսունացնել կամպանիայի համար մանեւրակրկիտունն նախապարասիվելու, իր ույժերը նիւթ գասավառելու յեվ աշխատանքը մարտականության կատարելու անհրաժեշտության վեա:

Կամպանիայի ժամկետերը, անցյալ կամպանիայի հետ համեմատած, զգալիաչափ կրծատված են։ Այս բանը պարտավորեցնում ե տեղերին այժմ և յետ բոլշևիկորեն ծավալել աշխատանքը։

Ի՞նչ ե հարկավոր նրա համար, վորպեսզի ապահովել կամպանիայի նորմալ ընթացքն և դրական արդյունքը։

Անհրաժեշտ ե, վոր տեղերն այժմ և յետ մանրակրկիտուրեն ստուգեն, թե ի՞նչպես են ստեղծված ընտրական կոմիսիաները, վորչափ ապահովված ե նրանց կազմը դասակարգայնությունը կայուն, յեռանդուն, կամպանիայի կարևորությունը հասկացող մարդկանցով։ Կուսակզմակերպություններն ու արհետակցական կազմակերպությունները պետք ե ընտրական կոմիսիաների անդամներին աղատան ուրիշ սուրբ նազրուղկաններից ընտրական կոմիսիայում կատարվող աշխատանքը համարելով հիմնական։

Յուրաքանչյուր գործարանում, ավանում, գյուղում, թաղամասերում, կոլխոզներում, իսկ մեծ կոլխոզներում—բրիգադներում—պետք ե կազմակերպել ոժանդակիչ կոմիսիաներ։ Ոժկոմիներ ընտրելու վրա պետք ե գարձնել վոչ պակաս ուշագրություն, քան ընտրական կոմիսիաների վրա։ Ոժկոմիների մեջ, ինչպես և ընտրական կոմիսիաներում, պետք ե լինեն դասակարգայնությունը կայուն ընկերներ։ Ոժկոմի անդամներին, ինչպես և ընտրական կոմիսիաների անդամներին, պետք ե ազտել ուրիշ հավելյալ աշխատանքներից։

Ընտրական կոմիսիաները պետք ե անհապաղ կերպով հրահանգներ տան ոժկոմիներին, վորոնքն նրանց անելիքներն ու պարտականությունները Ոժկոմիներին շարունակ ղեկավարելու և նրանց գործնեյությունն ստուգելու համար ընտրական կոմիսիան պետք ե ընտրել իր վորեւ անդամին։

Անցյալ կամպանիայի փորձը ցուց ե տալիս, վոր ընտրական կոմիսիաների կողմից ոժկոմիների առարյա ղեկավարության



բացակայությունը հաճախակի հասցրել ե այն դրության, վորուժկոմմերը կամ զբաղվել են վոչ այնպիսի գործերով, վորով պիտի զբաղվեյին, կամ թե չփառանալով, թե ինչ պիտի անեն, գոյություն են ունեցել միայն թղթի վրա:

Ընտրական կոմիսիան պարտավոր ե իր աշխատանքը կատարել խստորեն պլանի համաձայն: Հարկավոր ե հենց առաջին որերից թույլ չտալ ընտրական կոմիսիաների անդամների թափթափածությունը: Պետք ե հաջողեցնել այն, վորպեսզի ընտրական կոմիսիայի յուրաքանչյուր անդամ վորոշ աշխատանք կատարե և պատասխանատվություն զգա մի այնպիսի կարևոր գործի համար, ինչպիսին ե հաշվետուովերընտրական կամպանիան: Անցյալ կամպանիայում մի քանի վայրերում գործն այնպես յեղափ, վոր ընտրական կոմիսիայի անդամները չափազանց շուտ-շուտ ելին փոխվում: Այդպիսի անտանելի յերեվույթին պետք ե վերջ տալ հենց սկզբից: Այլապես դուրս ե գալիս, վոր աշխատում են յերկու-յերեք անդամ, իսկ մասնածներն ամբողջ ժամանակ ծանոթանում են աշխատանքին: Ընտրական կոմիսիայի համար չափազանց կարևոր ե ունենալ աշխատանքի ճշգրիտ պլան: Մեզ թվում ե, վոր այս կամպանիայում ընտրական կոմիսիան պետք ե յեթե վոչ պլանը կազմի, գոնե հիմնավորապես այդ պլանը կշռադատե մինչև հաստատվելը, վորպեսզի այն գիտենա բոլոր մանրամասնություններով: Աշխատանքի պլանը պիտի լինի կոնկրետ—յերբ, վորտեղ և ինչ աշխատանք ե կատարվում: Պետք ե նաև խիստ վերահսկություն սահմանել պլանի կատարման և ընտրական կոմիսիաների անդամների աշխատանքի վրա:

Այսունետե, պետք ե պարտավորեցնել ընտրական կոմիսիաների անդամներին գիտենաւ ընտրական հրահանգը: Բոլոր խոտորությունները, ընտրական իրավունքներից ապօրինի կերպով զրկելը և ընդհակառակը, այդ իրավունքները այն անձանց վերապահելը, վորոնց հարկավոր երգրկել—այս ամենը մեծավ մասամբ հետևանք ե այն բանի, վոր ընտրական կոմիսիաների անդամները չեն գիտեցել ընտրական հրահանգը:

Ընտրական կոմիսիաները շատ դեպքերում մեքենայաբար հաստատել են ձայնագությունների յուցակները:

Ընտրական կոմիսիաների անդամներն անհրաժեշտաբար

պիտի հիշեն, վոր ընտրական իրավունքներից զրկելը—այդ մեր, պրոլետարական զենքն ե, վորով մենք քաղաքական մահացու հարված ենք հասցնում մեր թշամիներին: Ուստի և այդ զենքը պետք ե գործազրել շատ և շատ մեծ ուշադրությամբ: Նրանով հարվածել պետք ե, անխնայորեն հարվածել իսկական թշնամիներին, բայց չի կարելի թույլ տալ, վոր հրահանգը ըստ գիտենալու կամ ուղղակի անուշադրության պատճառով հարվածել են յուրայիններին, զրկել են ձայնից նրանց, ով յենթակա չե ձայնագրկման:

Ընտրական կոմիսիաների խնդիրն ե վոչ միայն գիտենալ հրահանգը, այլ և հաջողեցնել վորպեսզի նաև գիտենա ոժկոմի յուրաքանչյուր անդամ, յուրաքանչյուր ընտրող և մանավանդ ակտիվիստ: Ինչու մեզանում, անցյալ կամպանիայում վոչ բոլորն ելին ձայնագրկվել և ընտրական ժողովներում, հրահանգը կարդալուց հետո, ընտրողները պահանջում ելին զրկել ձայնից հենց ժողովին ներկա գտնվող և ձայնից չզրկված մարդկանց, վորոնք յենթակա ելին անպայման ձայնագրկման: Վորովինետե հրահանգը ժամանակին չեր պարզաբանված:

Այժմյան կամպանիայում ընտրական կոմիսիաները, կուսաքիջները, արհեստակցական կազմակերպություններն ու հաստարական կազմակերպությունները և կոլխոզների վարչությունները պարտավոր են կազմակերպել հրահանգի ուսումնամիրություն: Մենք խօսիուրդ ենք տալիս, բացի ժողովներում հրահանգը պարզաբանելուց, պարզաբանել այն ուայոնական լրագրներում, իսկ ակմբներին, իրավիթ-ընթերցարաններին և կարմիր անկյուններին կից կազմակերպել հրահանգի խմբակային ուսումնասիրություն, այդ խմբակներում ներգրավելով առաջին հերթին ամբողջ ակտիվին:

Յուրաքանչյուր ընտրական թաղամասում հենց այժմ պետք ե ունենալ շենքեր ժողովների համար և դրանց ամրացնել բացի ընտրական կոմիսիաների և ոժկոմիների մանդամներից, նաև բավականաչափ զարգացած ընկերների—կուսակցության անդամների, ամբողջ կամպանիայի ժամանակաշրջանում պարզաբանական աշխատանք կատարելու համար: Այդ շենքերում անհրաժեշտ կենտրոնացնել ամբողջ գրականությունը (լրագրեր, զրքեր) վորը վերաբերում ե վերընտրություններին, կամմել սիստեմատիկ զրուցներ վերընտրությունների նշանակուղյան

մասին, այդ կամպանիայում ընտրողների անելիքների մասին. պարտավորեցնել պատի լրազներին (սա ույսնական լրագրուների խմբագրությունների գործն է) լույս ընծայել տասնորյա թերթեր, վորտեղ կամպանիայի պարզաբանման հետ մեկտեղ, լուսաբանել նաև նախապատրաստության ընթացքը:

Ընտրական կոմիսիան, ոժկոմները, հասարակական կազմակերպությունները, ակտիվը—պարտավոր են մրցություն կազմակերպել գործարանների, կոլլոգների, թաղամասերի և գյուղերի միջև, կամպանիան ամենալավ կերպով անցկացնելու համար: Պետք է սահմանել հենց իրենց, մասսաների կողմից նախապատրաստության ընթացքի փոխադարձ սիստեմատիկ ստուգում:

Խորհրդները և գործկոմները պետք է հենց այժմ սկսեն կազմել հաշվետվություններն, այն հաշվով, վորպեսզի դրանք գեկուցողներին հանձնվեն փոչ ուշ քան հաշվետու ժողովներից կես ամիս առաջ: Զեկուցողներին, մասնականդ խորհրդների շարքին անդամներին, անհրաժեշտ ե հրահանդիներ տալ: Գուցե և նրանց պետք է պատմել նույնիսկ, թե ինչպես դասուրբել գեկուցումը: Իսկ ժողովներից հինգ-վեց որ առաջ պետք է կատարել զեկուցողների պատրաստության ստուգում, այնպես, վորպեսզի նրանց դրատել, իսկ յեթե հարկավոր ե, հնարավորություն ունենալ փոխել անհաջող զեկուցողներին:

Ընտրական կոմիսիան պարտավոր է հասարակական կազմակերպություններին քաշել նախապատրաստական աշխատանքի մեջ: Ընտրական կոմիսիայի ընդհանուր պլանում պետք է արտացորի նաև արհեազմակերպությունների, կոռպերացիայի, կոլլոգների, շեֆական ընկերությունների աշխատանքը (հաշվետուվել ընտրական կամպանիայի շուրջը), վորպեսզի մասսաների մեջ աշխատելու փոխարեն չստացվեն անարդյունավետ նիստեր, ինչպես այդ մի քանի տեղերում յեղավ անցյալ կամպանիայում:

Առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնել ծայրամասերի անկազմակերպ բնակչության մեջ պարզաբանական աշխատանք կատարելու վրա—մասնավորապես տանտիրունի կանաչը (քաղաքներում): Այս աշխատանքը յեղել է բոլոր անցյալ կամպանիաների հիվանդ կողմը: Ծայրամասերում աշխատելու համար անհրաժեշտ ե ընտրել հատուկ ընկերների, կազմակերպել ժամանակավոր կարմիր անկյուններ, կամպանիայի

կարեռությունը պարզաբանելու համար ոգտագործել ընտրողների ցուցակները կազմելու և ստուգելու ժամանակ տնելուն ըջելու: Կանանց ամենամեծ չափով հաշվետու և ընտրական ժողովներին ներգրավելու համար անհրաժեշտ է կազմակերպել ժամանակավոր մանկական սենյակներ:

Ազգային փոքրամասնությունների ընտրողների կոմպակտ մասսայի համար քաղաքներում և մեծ գյուղերում պետք է ստեղծել հատուկ թաղամասեր և այնտեղ պարզաբանական աշխատանքը կատարել նրանց մայրենի լեզվով: Խորհրդների աշխատանքի հաշվետվությունը նույնպես պիտի տալ աղջությունների մայրենի լեզվով: Դրա համար մարդիկ, ցանկության դեպքում միշտ ել կետնվեն:

Պարզաբանական աշխատանքի համար, մանավանդ գյուղում, անհրաժեշտ է ոգտագործել ուսուցչությանը, բժիշկներին:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր թե հաշվետվականն և թե վերընտրական կամպանիայում փոչ մի կերպ չի կարելի թույլ տալ զեկուցողների և լիազորների ուշանալը ժողովներին: Այդ դեռ բավական չե: Այն շենքերում, վորտեղ անց են կացվելու ժողովները, պետք է գործն այնպես զնել, վորպեսզի այն տեղում յեթե հարկած ընտրողը կարողանա ոգտակար կերպով անցկացնել սպասման ժամանակը: Պետք է կազմակերպել ժամանակավոր ընթերցարան, այնտեղ ունենալ լրագրներ, բրուցյուրներ, շաշկի և այլ խաղեր: Դրա հետ մեկտեղ, պետք է հիմնականապես մշակել ժողովների մասին ծանուցելու սիստեմը: Մանուկների միջոցները ժողովների մասին ծանուցելուց պիտի հրաժարվել: Այդ դերը պիտի կատարե ակտիվը:

Արդեն այժմ անհրաժեշտ է սկսել նակազը կազմելու աշխատանքն, այնպես, վորպեսզի այն բաց թողնել և ընտրողին հասնել մինչև հաշվետու ժողովներն այնպիսի ժամանակամիջոցները, վորը հնարավորություն տա ընտրողին ծանոթանալ, քննել իր հավելումները, փոփոխությունները և այլն: Անցյալ կամպանիայում նակազն ուշացնողները հաճախ արդարանում եյին այսպիսի առարկություններով: «մենք գիտմամբ ուշացրինք նրա համար, վորպեսզի մասսան ինքը նակագ տա»—այսպիսի հայացքը միանգամայն սխալ և պոչից քարշ գալու արտահայտություն է:

Նակազը կազմելու հետ միաժամանակ պետք է սկսել ան-

ցյալ նակազը խորհրդների կողմից կատարվելու ստուգման կազմակերպումը: Մասսաներին կամպանիայի մեջներգրավիելու այս մեթոդը միանգամայն արդարացավ. հարկավոր և միայն այդ գործում ներգրավել շարքային ընտրողներին և նրանց աշխատանքի արդյունքները լայնորեն լուսաբանել թե բանսպոր կերպով և թե մամուլում:

Մինչև ամբողջ խորհրդների հաշվեավությունը պետք է ստիպել բոլոր պատգամավորներին՝ ընտրողների առաջ հաշիվ տալ խորհրդում նրանց կատարած անձնական աշխատանքի մասին:

Վերջապես, պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել խորհրդների անդամության համար հանձնարարված թեկնածուների ընտրության վրա, նրա համար, վորպեսզի մեկ-յերկու անհաջող ընտրված թեկնածուների պատճառով չտապալել բոլոր հանձնարարվածներին: Իսկ այդպիսի փաստեր մեզանում յեղել են անցյալ կամպանիայում:

Ահա, մեզ թվում ե, միջոցառումների այն անհրաժեշտ մինիմումը, փորը պիտի լինի հաշվետու-վերընտրական կամպանիայի նորմալ ընթացքի համար:

Մինչև կամպանիայի սկիզբը շատ քիչ ժամանակ և մնացել Պետք և այժմ և յետ լարեր բոլոր ույժերը, վորպեսզի այստեղ, վորտեղ քիչ բան և արված, լրացնել թերին:

Յեռանդուն նախապատրաստությամբ, ույժերի ճիշտ դասավորումով, աշխատավոր մասսաների ուշադրությունը զորահավաքելով կամպանիայի կարեռության վրա, թշնամիներին շեշտակի հարվածելով, մենք կչեզոքացնենք, ջարդ ու փշուր կանենք նրանց սպասելիքները: Բորբոքենք, ցնցենք մասսաների ակտիվությունը, մեր լոգունգներով առաջնորդենք նրանց գեղալի խորհրդների աշխատանքի ստուգումը, հայտնաբերենք խորհրդների աշխատանքի թերությունները և նրանց մեջ ընտրենք կայուն և ակտիվ ընկերների, վորոնք անձնատրված են պրոլետարիատի գործին:

Համկօմիուսի (թ) ըուցը համախմբենք բանվորների, կոլխօզնիկների, բաւրակների, չխավորների լեզ լավագույն միջակների միջակարգային մասսաներին:

ՄԻԱՅՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ և ԱՇԽԱՐՀՆ ԱԶԱՏԵԼ ՊԱՏԵՐԱԳՄԻՑ: ԿԵՅՅԵ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ:

ԱՅՆ ԱՌԱԵՆՑ

ԴԵՊԻ ՎԵՐԸՆՏՐԱԿԵՆ ԿԱՄՊԱՆԻՅԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային կովկասը, ինչպես և ամբողջ ԽՍՀՄ-ը, մտել և խորհրդների ընտրություններին նախապատրաստվելու շրջանը:

Հերթական վերընտրական կամպանիան պետք է անցնի սոցիալիստական ինդուստրիայի բուռն աճման, գյուղատնտեսության կոլեկտիվացման բուռն վերելքի և համատրած կոլեկտիվացման հիմունքով կուլակի, վորպես դասակարգի, լիկվիդացիայի պայմաններում: Խորհրդների առաջիկա ընտրությունները պետք ե կազմակերպեն բանվորների, կոլխոզնիկների, բարակների, չքավորների ու միջակների միլիոնավոր մասսաներին, քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի վրա հետագա հաղթական առաջնապացման համար:

Վերընտրական կամպանիան պիտի անցնի դասակարգային սրված պայքարի պայմաններում: Դասակարգային թշնամին պետք է ամեն կերպ փորձե ակտիվություն ցուցահանել, գասակարգայնորեն թշնամի տարրերը, անկասկած, պիտի կատարեն հակախորհրդային, պրովակացիոն աշխատանք, աշխատելով վերընտրություններն ողտագործել իրենց շահերի համար: Դասակարգային թշնամին վոչ մի բանի առաջ կանգ չի առնելու իր գործնեռության մեթոդներն ընտրելիս: Դասակարգային թըշնամու այդ յելույթներին պետք ե նախապատրաստել վճռական և անխնա հակահարված: Այստեղ պահանջվում է խորհրդային որդանների առանձին արթնությունը, դասակարգային առանձնահատուկ աշակերջություն:

Կուլակ-շահագործիչ, հակախորհրդային տարրերը պետք ե դիմեն ամեն տեսակ խորամանկությունների, պետք ե աշխատեն խցկվել խորհրդական մեջ և այնտեղ քարշ տալ իրենց ձայնակիցներին: Ի՞նքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր «պրոլետարիատի ու նրա շահագործողների վճռական պայքարի մոմենտին, շահագործողները չեն կարող տեղ ունենալ իշխանության և վոչ մի որգանում*): Այս պատճառով կուլակային ակտիվությանը պետք ե հակադրվի կոլխոզային մասսայի, վորպես գյուղում կուսակցության և խորհրդային իշխանության հենարանի, ուժեղացրած ակտիվացումը և գյուղական չքավորության ու միջակության համախմբվածությունը (համապատասխան կերպով նույնը և քաղաքում): Դասակարգային թշնամին պետք ե քաղաքականապես չեղոքացվի՝ նրան ընտրական իրավունքներից զրկելու և ընտրություններին մասնակցել թույլ չտալու միջոցով: Հարկավոր ե վաղորոք, խորհրդային ակտիվի ոգնությամբ, ի հայտ բերել դասակարգայնորեն խորթ տարրերին, վորոնք ինչ-ինչ պատճառներով չեն մտել ձայնաղուրկների ցուցակների մեջ, բայց վորոնք չեն կարող և չպետք ե թողնվեն խորհրդների վերընտրություններին: Հենվելով լայն մասսաների վրա, խորհրդները և ընտրական կոմիսիաները կկարողանան հականարդած տալ կուլակ նեպմանական տարրերի կողմեց ընտրական որենսդրությունն անտեսելու փորձերին:

Խորհրդների վերընտրություններին նախապատրաստվելու առաջին շրջաններից մեկն ե հանդիսանում ընտրական կոմիսիաների կազմակերպումը: Այս կոմիսիաների աշխատանքն ու կազմը ստանում ե հակայական, առաջնակարգ նշանակություն, հարկավ, հենց նրանք, այդ կոմիսիաներն են իրականացնում վերընտրությունների գեկավարությունը: Անցյալ վերընտրություններում մենք ունեցանք մի ամբողջ շարք գեկպեր, յերբ աղտեղված ենքն ընտրական հանձնաժողովները, մանավանդ գյուղական հանձնաժողովները—խորթ, հակախորհրդային մարդկանցով, վորոնք հաճախ հետապայում նույնիսկ իրենք եյին զրկվում ընտրական իրավունքներից:

Ընտրական կոմիսիաների կազմը պիտի ստեղծվի խորհրդների ընտրությունների վերաբերյալ հրահանգին համապատասխան, այնպես, վոր ապահովվի վերընտրական կամպանիա-

*.) «Աշխատավոր ժողովրդի իրավունքների դեկլարացիայից»:

յի ձիշտ, դասակարգայնորեն կայուն անցկացումն ու ղեկավարությունը: Գյուղական (ստանիցաների) ընտրական կոմիսիաներում, ընտրական նոր հրահանգին համապատասխան, պետք ե ապահովվի կոլխոզների, վորպես գյուղում խորհրդային իշխանության հենարանի մասնակցությունը Այդ կոմիսիաներում պիտի ներդրավվեն նաև գյուղացիության միջակ մասսաների և կանանց ներկայացուցիչները:

Հատուկ ուշադրություն պիտի դարձվի ձայնաղուրկների ցուցակները մանրակիտորեն կազմելու և գործող ընտրական որենքից և վոչ մի շեղում թույլ չտալու վրա: Անցյալի փորձը ցույց տվեց, վոր մի ամբողջ շարք տեղերում, այդ բնագավառում յեղել են աղաղակող խեղաթյուրումներ և խոտորումներ: Պահանջվեց մեր կուսակցության կենտկոմի և ԽՍՀՄ կենտաշխկի զրկումի միջամտությունը, վորպեսի ուղղել քաղաքական գծի գործկոմի միջամտությունը, վորպեսի ուղղել քաղաքական գծի այդ աղճատումները, վորոնք ուղղակի ծառայություն են մատուցում դասակարգային թշնամուն:

Վերջերս հրապարակված ե խորհրդների վերընտրությունների վերաբերյալ նոր հրահանգը, վորը հաստատել ե ԽՍՀՄ կենտգործկոմը 1930 թ. հոկտեմբերի 3-ին: Այդ հրահանգը, հաշվի առնելով նախորդ ընտրական կամպանիաների փորձը և ընթացիկ տարվա սկզբում յեղած հակամիջակային խոտորումները, մտցնում ե մի ամբողջ շարք ճշումներ, վորոնք կանխում են այնպիսի անձանց ձայնաղուրկների ցուցակների մեջ մտցնելը, վորոնք ընտրական իրավունքներից չեն կարող գրկվել և չպետք ե գրկվեն: Յենելով մեր սահմանադրության հիմունքներից, վորոնց համաձայն պետք ե անշեղորեն վտարել խորհրդների վերընտրություններին մասնակցելուց դասակարգայնորեն թշնամի, շահագործող տարրերին (հրահանգը արգելում ե նրանց մինչև անգամ ներկա գտնվել ընտրական ժողովներին), և աշխատավոր մասսաները պիտի ապահովված լինեն ընտրական լայն իրավունքներով, նոր ընտրական հրահանգը մի կողմից ճշում ե այն նշանները, վորոնք վորոշում են կուլակային, շահահագործող անտեսությունների հասկացողությունը, վորոնց անդամները գրկվում են ընտրական իրավունքից, իսկ մյուս կողմից—մասնբամանորեն թվում ե բնակչության կատեգորիաները, վորոնք չեն կարող գրկվել ընտրական իրավունքներից:

Ի գարգացումն Միութենական կենտգործկոմի հոկտեմբերի

Յ-ի այդ հրահանգի, Համառուսական կենտրոնակոմը մոտ որերս հաստատեց խորհրդների ընտրությունների վերաբերյալ նոր հրահանգը ՌԱԽԹՀ ամբողջ տերքիառիտյի համար:

Մենք մանրամասն կանգ չենք առնում Համառուսական կենտրոնակոմի այդ հրահանգի վրա: Այնուամենայի անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի քանի հիմնական, կարեվորագույն մոմենտների վրա:

Ճշտելով այն անձանց կատեգորիաները, վորոնք չեն կարող զրկվել ընտրական իրավունքներից, ընտրական հրահանգը, ի միջի այլոց, սահմանում ե, թե ով չի զրկվում ընտրական իրավունքից.—այն գյուղացիները, վորոնք իրենց անտեսության մեջ գործադրում են մեկ բանվորի վարձու աշխատանքը՝ հիվանդության, կարմիր բանակ կանչվելու, հասարակական պաշտոնի ընարկելու, վորը պահանջում ե կտրվել տնտեսությունից և այլն գեղագրում. այն գյուղացիները (և նրանց ընտանիքները), վորոնք գնում են սեղոնային աշխատանքի և իրենց բացակայության ժամանակ տնտեսության մեջ գործադրում են մեկ բանվորի վարձու աշխատանքը. ֆարբիկաների և գործարանների բանվորները (և նրանց ընտանիքները), վորոնք չեն կտրվել գյուղական տնտեսությունից և իրենց տնտեսության մեջ վարձում են վոչ ավելի մեկ բանվորից. յերկրագործները, անսասնապահները և ձկնորսները, վորոնք իրենց աշխատանքային մթերքներն սպառում են շուկայում. բնակելի շենքերի տերերը, վորոնց յեկամուտը ավելի չե չհարկվող մինիմումից. առանց մեխանիկական շարժիչների աշխատող զանազան ձեռնարկությունների տերերը, վորոնք չեն գործադրում վարձու աշխատանք, յեթե նրանք չեն շահագործում շրջակա բնակչությանը՝ տանը աշխատանք տալու միջոցով և յեթե նրանք այդ ձեռնարկությունները չեն տալիս արենդով. այն անձինք, վորոնք ապրում են պետական փոխառություններից ըստացվող շահումներով ու տոկոսներով, խնայողությունների յեկամուտներով վորոնք գտնվում են պետական աշխատավորական խնայողական գանձարկներում. աշխատանքի և պատերազմի ինվալիդները, վորոնք առանձին պատճառների շնորհիվ բզբաղվում են մանր առևտորով. նույնպես այն անձինք, վորոնք գործադրության կամ ժամանակավոր հաշմանդամության հետեանքով զբաղվում են նույնպիսի մանր առևտորով. այն ան-

ձանց ընտանիքների անդամները, վորոնք զրկված են ընտրական իրավունքներից, յեթե նրանք նյութապես կախում չունեն այդ անձանցից և զբաղվում են ինքնուրույն, հասարակականորեն ոգտակար աշխատանքով:

Մեծ նշանակություն ունի հրահանգը ցուցմունքն այն մասին, վոր ընտրական իրավունքներից չի զրկվում յերիտասարդությունը, վորը չափահասության և հասել 1925 թվին և հետո, վոր մինչև չափահասությունը գանվել և ձայնագուրկծնողների հոգածության տակ և ներկայումս զբաղվում ե ինքնուրույն, հասարակականորեն ոգտակար աշխատանքով, թենուրույն, հասարակականորեն ոգտակար աշխատանքով, թենուրուգուգ և այդ յերիտասարդությունն ապրելիս լինի իր ծնողների հետ: Այս ցուցմունքի խմաստը միանդամայն հասկանալի յեւ Մենք պետք ե մեր ազգեցության տակ առնենք աճող յերիտասարդությունը, իսկ այդ բանին հասնել կարելի յեւ նրան գեպի մեզ գրավելով, գեպի քաղաքացիական կյանք, դեպի խորհրդային քաղաքացու պարտականությունների կատարումը: Հրաժարական սա պայքար ե աճող յերիտասարդության համար:

Ուշադրության արժանի յեւ նաև հրահանգի կարական ցուցմունքն այն մասին, վոր ձայնագուրկների մեջ մայցնելը տեղի յեւ ունենում միայն փաստական տվյալների հիման վրա: Հենց սրանով ել պիտի կանխվի անցյալի պրակաիկան, յերբ տեղական աշխատառներն, ոգտվելով լուրերից և կան, յերբ ապահովական գանձարկներից, հանցավոր անփությունների հայտնատուգված տվյալներից, հանցավոր անփությունների հարցում մի այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին ե ընտրական իրավունքից զրկելը:

Հրահանգը պարտավորեցնում է համապատասխան որգաններին պարտադիր ստուգման յենթարկել այս կամ այն անձի հայտացվող հայտարարությունները, հավաքելով բոլոր անմասին ստացվող հայտարարությունները:

Խոսունությունների կրկնությունից խուսափելու համար և վոչ թե խոսքով, այլ գործով քաղաքական ճիշտ գիծն ապահովելու նպատակով, անհրաժեշտ ե հաջողեցներ, վոր տեղերում ճշունեն կիրառեն խորհրդների ընտրությունների նոր հրահանգը և այդ բնագավառում ամենավճռական կերպով արմատահանվի տեղական «ստեղծագործությունը»: ԽՍՀՄ կենտրոնակոմն ուղղական մատնանշում ե, վոր «անհրաժեշտ ե ղեկավարվել

ամբողջ ԽՍՀ Միության համար միասնական ընտրական որենսու-
դրությամբ. ներկա ընտրական հրահանգի վորևել փոփոխու-
թյուններ, վորոնք կապված են տեղական կենցաղային պայ-
մանների հետ—կարող են թույլատրվել միայն ամեն մի
առանձին դեպքում ԽՍՀՄ կենտգործկոմի նախագահության ա-
ռանձին թույլտվությամբ։ Պետք է հաջողեցնել, վորպեսզի
ԽՍՀՄ կենտգործկոմի ցուցմունքն անպայման կատարվի։ Նոր
ընտրական հրահանգի խիստ կատարումով ձեռք կբերվի քա-
ղաքական ճշգրիտ դիմումներ։ Ընտրական կոմիսիաների աշխատան-
քում։

Անհրաժեշտ է այժմ և յետ սկսել ձայնագուրկների ցուցակները կազմելն և ստուգելլը: Մինչև վերընարությունների սկիզբը (գեկտեմբեր) բոլոր նրանք, ովքեր սխալմամբ են մըսցը պետք այդ ցուցակների մեջ, պետք է դուրս հանվեն նրանցից: Այդ աշխատանքը չի կարելի կատարել կարինետային ձևով: Նըրան պիտի ներգրավել կոլլագնիկներին, պարտիզաններին և չքաղորական խմբակներին, այդ աշխատանքը պետք է կատարել առանձնահատուկ մանրակրկիտությամբ:

Սնցյալի պրակտիկան ցույց ե տալիս, վոր ընտրական իշխափունքներից զրկված անձանց գործերը քննելու ասպարիզում տեղական խորհրդներն ու գործկոմները միանգամայն անսիստեմ աշխատանք են կատարել: Անհրաժեշտ ե միջոցներ ձեռք առնել, վարպետզի վերնտրական կամպանիայի սկզբում լիա-չափ վերացվեն խորհրդների աշխատանքի այն պակասությունները, վորոնք կապված են ձայնազուրկների վերաբերյալ գործերի հետ: Մինչև ընտրությունները մնացած ժամանակամիջու-ցում պետք ե ըննվեն բոլոր հին բողոքները և պետք ե ստեղծվի այդ գործերը հաշվի առնելու կայուն սիստեմ:

Համառուսական կենտրոնական գաղտնա սրբառն:

Հնատրական իրավունքներից զրկվելու բողոքների քննության կայուն ժամկետերը: Բողոքները արփում են այն ընտրական կոմիսիաներին, վորը կազմել և ձայնագուրբեկների ցուցակը և վորը պարտավոր ե յերեք որվա ժամանակամիջոցում բողոք նյութերըն ուղարկել համապատասխան դործկոմին կամ խորհրդին: Այս վերջինները նույնպես պարտավոր են յերեք որվա ընթացքում ըստ եյության լուծել բողոքը: Վերադաս որգանները համապատասխան դեպքերում պարտավոր են քննել իրենց ստացած բողոքները վոչ ուշ քան յոթ որվա ժամանակամիջոցում:

Բնդոքները քննելու համար հրահանդի սահմանած կայուն ժամկետը պետք է վերջ տան մինչև այժմ այս բնագավառում նկատված քաշը լին:

Խորհրդների վերընտրությունները հանդիսանում են մաս-
սայական քաղաքական կամպանիա։ Յեկ կորև մասսայական
այն կամպանիա, միայն ծավալված պրոլետարական դեմոկրա-
տիայի հիմունքով պետք են նախապատրաստվեն և անցկացվեն
հաշվետվություններն ու վերընտրությունները։ Այս կամպա-
նիայի շուրջը պիտի զորահավաքվի ամենալայն աշխատավոր
մասսաների ակտիվությունը։ Կամպանիան սիտի անցնի խոր-
հըրդների աշխատանքի թերությունների, նրանց սխալների, կու-
ռակցության գլխավոր գծի և կառավարության գիրեկափակությունը՝
խեղաթյուրումների պրոլետարական քննադատության խակական
ողունգի տակ։ Առանձին վայրերում անհնարին չեն այսպիսի
փորձերը։ — Կամպանիան անցկացնել ապարատային՝ բյուրո-
կրատական ճանապարհով և նույնիսկ վարչականության, հրա-
մայելու և ճնշում գործադրելու մեջոնքներով։ Այդպիսի յե-
րկուութների հետ, վորոնք խախտում են խորհրդային (պրոլե-
տարական) դեմոկրատիան, պետք են վճռական պայքար մղել։

Այս հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում պիտի ստուգվի, թե վորչափ նրանք խկապես գլխավորում են գյուղում անցկացվող տնտեսա-քաղաքական կամպանիաները: Խորհրդները պետք են հաշիվ տան, թե ի՞նչպես են կատարել ի- ունց աշխատանքը, վորպես սոցիալիստական ինդուստրիայի կազմակերպիչներ և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը կիրառողներ:

Այս կամպանիայի ընթացքում անհրաժեշտ ե ավելի ևս համախմբել միլիոնավոր մասսաներին խորհրդների շուրջը: Բան- գորների, բատրակների և չքավորության առավելագույն հա- մախմբվածության հիմունքով, միջակի հետ միությունն ամրա- պնդելու հիմունքով ապահովենք ինդուստրացման վերցրած տեմ- պերի կատարումը, իրազործենք համատարած կողեկանիվացումը և նրա հիման վրա կուտակի վերացումն իրը դասակարգի:

Վերընարությունները սկիտի անցնեն խորհրդների, վորպես
պրոլետարական դիկտատուրայի որգանների, ամրապնդման նշա-
նաբանի տակ:

Հոկտեմբերյան հեղափոխությունը նորությունից
ազատագրեց բանվորություն յեվ գեղջկություն
Բոլոր յերկրների բանվորությունը յեվ աշխատավոր
կանայք, կանգնեցեք Հոկտեմբերի դրուակների տակ:

Ա. Ա.

ԸՊԱՀՈՎԵԼ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻՆ

Խորհրդների վերընտրությունները 1928—29 թվականից
անցան կանանց աշխատավոր մասսաների մեծ ակտիվությամբ:
Ներկա գտնվելու տոկոսի ավելացման հետ մեկտեղ աճում է
նաև կանանց տոկոսը իշխանության որգանների կազմի մեջ:

Կարող ենք մենք արդյոք առաջիկա վերընտրական կամ-
պանիայում սահմանափակվել անցյալում ձեռք բերած հաջո-
ղություններով: Իհարկե վոչ: Պետք է ձեռք բերել ավելին: Այս
հարցում շատ բան կախված կլինի նրանից, թե խորհրդներն և
թե բոլոր հասարակական կազմակերպություններն ի՞նչպես
կանցկացնեն վերընտրությունների նախապատրաստությունը:

Կանանց աշխատավոր մասսաների մասնակցությունը խոր-
հրդների վերընտրություններին անյերևակայելի յե իրքեւ մի
ինչ վոր ինքնուրույն կամպանիա, վորը կտրված է ընդհանուր
կամպանիայից: Վերընտրությունների նախապատրաստության
և անցկացման ժամանակաշրջանում կանանց մեջ տար-
վելիք հիմնական աշխատանքը հանգում է նրան, վոր-
պեսզի գեւսես յետամնաց կանանց մասսան, վորը, տղամարդ-
կանց հետ համեմատած, գտնվում է առանձին կենցաղային
պայմաններում—կամպանիային դիմավորե ավելի գիտակցորեն
և նախապատրաստված: Իսկ քանի վոր այդ այդպես է, ապա
ուրեմն նախապատրաստական աշխատանքներ անցկացնելիս,
վերընտրությունների պլանը կազմելիս չի կարելի մոռանալ
այդ առանձնահասակության մասին: Իսկ աշխատանքի պլակտի-
կան ցույց է տալիս, վոր մեր խորհրդային ստորին կազմա-

կերպությունների մեծամասնությունը թերի յե հաշվի առնում
այդ կարեռագույն մոմենտը:

Ըստ եյության, խորհրդների վերընտրությունների կամ-
պանիան բաժանվում է մի քանի շրջանների: Պետք է հաջո-
ղցնել, վորպեսզի կանացի ազգաբնակության ամենաակտիվ
մասը անմիջական մասնակցություն ունենա այդ աշխատանքի
բոլոր ետապներում:

Ընտրական կոմիսիաների կազմի մեջ անհրաժեշտ է մըտ-
ցնել կանանց կազմակերպված մասի ներկայացուցչին: Արդեն
ձեավորված այդպիսի կազմակերպություն թե զյուղում և թե
քաղաքում հանդիսանում են պատգամավորական ժողովները:

Ժողովների միջոցով առաջ քաշված ներկայացուցչունին,
ոժտված հասարակական վատահությամբ և զգալով իր վրա հա-
ստակական պատասխանատվություն, կապված լինելով կազ-
մակերպության հետ, նակայական ոգուտ կբերե ընտրական կո-
միսիայի աշխատանքին:

Ընտրական իրավունքներից զրկածների ցուցակների
քննությունն ու կազմելը նույնպես պիտի անցնի կանանց
պատգամավորական ժողովների միջոցով: Սա չափաղանց կա-
րելու մի մոմենտ է, վորը քաղաքականապես ուժեղացնում է
կանանց մասսային:

Խորհրդների աշխատանքի անցած ժամանակաշրջանում մենք
ունեցել ենք կանանց մի զգալի բանակ՝ խորհրդների զործնա-
կան աշխատանքում: Զիսուելով նախագաների և սրանց տե-
կական մասին, խորհրդների կազմում յեղել են շատ ակ-
տիվիստկաներ: Խորհրդները պետք է աշխատեն, վորպեսզի նրանց
բոլոր անդամները, մանավանդ կանայք, ընտրողների առաջ հա-
ջույղ տան իրենց աշխատանքի մասին: Այս բանը հնարավորու-
թիվ տան աշխատանքի կապը խորհրդների և ընտրողների միջև
թյուն կտա ամրապնդել կապը խորհրդների և ընտրողների միջև
ու ստուգել գործնական աշխատանքի ընթացքում առաջ յեկած
կանացի ակտիվը, հետագայում նրան առաջ քաշելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանը, այսինքն խորհրդի աշխա-
տանքի հանրագումարները տալու մոմենտը պետք է դարձնել
նվաճումների և թերությունների ստուգատես: Կանանց մասսա-
կան համար ամենամոտ մասը—կենցաղային և կուլտուրական աշ-
խատանքը—պետք է առանձնապես մանրակրկիտ կերպով մշակ-
վի կանանց թաղային և կոլլագուային ժողովներում:

Ամենապատասխանատու մոմենտը — այդ խորհրդների թեկնածությունների նախնական նշումն ու քննությունն եւ:

Կարեռ ե հաջողեցնել վոչ միայն այն, վորպեսզի կանանց թեկնածությունները խորհրդների համար՝ անցնեն պատգամավորական և այլ կանացի ժողովներով, այլ և այն, վորպեսզի բոլոր, առանց բացառության, թեկնածությունները հայտնի լինեն կանանց:

Այլ դրության դեպքում մենք յերաշխավորված չենք լինի նույնիսկ գործունյա թեկնածությունների տապալման դեպքերից, ինչպես այդ յեղավ մի շարք դեպքերում, անցյալ վերընտրական կամպանիայում:

Կենցաղային առանձնահատկությունները առաջադրում են դրանց ուշադիր հաշվառումն և համապապատասխան գործնական միջոցառումներ: Անցյալ փորձը ցույց է տալիս, վոր այնտեղ, վորտեղ ամբողջ լրջությամբ անց են կացրել կանանց, մանավանդ բազմանդամ ընտանիքավորներին ժողովում գտնվելու մաքսիմալ չափով հնարավորություն տալու աշխատանք, կանանց ներկայությունն զգալի չափով բարձրացել եւ: Յերեխաների ժամանակավոր խնամք կազմակերպելը նշանակալից չափով հեշտացնում է կանանց մասնակցությունը: Պետք է դրա համար ոգտագործել բոլոր հնարավորությունները, աշխատել վորպեսզի կոլխոզներն զբաղվեն այդ գործով, վորպեսզի ոգտագործվեն պիոներական և դպրոցական կազմակերպություններն այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր ընտրական թաղամասում, վերընտրական աշխատանքի ամեն մի մասի համար կազմակերպվեն ժամանակավոր մանկամասուրներ և հրապարակներ:

Յեթե մենք աջողեցնենք այն, վոր կամպանիայի ժամանակաշրջանում յուրաքանչյուր ընդհանուր միջոցառում նախապես քննվի կանանց մասսայի կողմից, մենք զգալիորեն ավելի արդյունքներ կստանանք, քան նախորդ կամպանիայում, քանի վոր կանայք թե քաղաքականապես և թե գործնականապես ավելի շատ պատրաստված կլինեն: Հենց դրանով ել մենք կամրապնդենք մեր դիրքերը և կթուլացնենք հնարավորությունը կուլակային ագենտուրայի համար՝ հակախորհրդային շահերի համար ոգտագործելու կանանց յետամացությունը:

Մեր յուրաքանչյուր քայլը, յուրաքանչյուր միջոցը միայն

այն ժամանակ կտա մեզ ցանկալի արդյունքը, յեթե մենք կարողանանք մեր ամբողջ աշխատանքը կատարել թե կոլխոզների ների և թե անհատականների բատրակ-չքավորական ու միջակային մասսաների միջոցով:

Տվյալ դեպքում ուժեղ ազդակ պիտի հանդիսանա սոցիալական մրցման մեթոդը: Ռայոնը ույսինի հետ, գյուղը գյուղի հետ, մեկ ընտրական թաղամասը մյուսի հետ սոցիալիստական մրցման կարգով կանցկացնեն վերընտրությունների նախախաղատրաստությունն ու անցկացումը, կընդորինակեն ուրիշների փորձը և իրենց աշխատանքը կդնեն մասսաների քըննության: Այդպիսի ճանապարհով մենք կկարողանանք ապահովել վերընտրական կամպանիան գյուղի բատրակ-չքավորական ու միջակային ամենալայն մասսաների և քաղաքի բանվոր բընակչության մասնակցությամբ:

Մասնավորապես այդ մեթոդը պետք է գործադրել ընտրական կամպանիայում կանանց մասնակցության վերաբերմամբ, կազմակերպելով հատուկ մրցություն կանանց մեջ և կանացի կողեկանիքներում կամպանիայում ամենալավ կերպով մասնակցելու և հարյուր տոկոսով ներկայանալու համար:

Միայն այդ ճանապարհով մենք ձեռք կբերենք այն, վոր առաջիկա հաշվետու-վերընտրական կամպանիան կապահովվի կանանց մասսաների ակտիվ մասնակցությամբ: Հենց դրանով իրականացվում են լենինի խոսքերն այն մասին, թե սոցիալիստական շինարարության գործը կամրապնդվի այն ժամանակ, «յերբ հարյուր հազարավոր կանանց փոխարեն նրանում մասնակից կլինեն միլիոնավոր կանայք»:

Գ. Վ. Ր Մ Ա Ն

ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՋԳԻՏ ԿԻՐՍՈՒՄԸՆ ՆՃԱՆԱԲԱՆԻ ՏԱԿ

Մոտենում է խորհրդների հաշվետու-վերընտրական կամպանիան, ուստի և ներկա մոմենտի գլխավոր խնդիրներից մեկն և հանդիսանում այդ կամպանիայի համար ժամանակին, քաղաքականապես ուղիղ և մանրակրկիտորեն — գործունյալ կեր-

պով, կաղմակերպչական նախապատրաստությունը։ Հաշվետուապով, կաղմակերպչական կամպանիան մի առանձին տեղ է բռնում մեր վերընտրական կամպանիան մի առանձին տեղ է բռնում մեր բոլոր տնտեսա-քաղաքական կամպանիաների մեջ, քանի վոր ըստ իր եյության, նա տալիս է մյուս կամպանիաների հանրագումարները։

Հիրավի, մեր բոլոր կամպանիաները, վորոնցից ամեն մեկը պահանջում է առանձնահատուկ և արտակարդ ուշագրություն, սերտորեն կապակցված են մեկը մյուսին, կազմելով մեկ շըդթայի ողակը, բայց յուրաքանչյուրը վերաբերում է ժողովրդական տնտեսության և քաղաքական կյանքի մի վորեւ կողմին։ Իսկ հաշվետու-վերընտրական կամպանիան միավորում է մեր յերկրի կյանքի բոլոր կողմերը—թե պաշտպանությունը, թե հացամթերումները, թե ցանքը, թե կոլեկտիվացման ընդլայնումը և կուլակի ժկվիդացիան վորպես դասակարգի։ Քաղաքականության և տնտեսության բոլոր կողմերը, մեր սոցիալիստական շինարարության և դասակարգային պայքարի բոլոր կողմերը պետք է իրենց արտացոլումը գտնեն խորհրդների վերը ընտրության կամպանիայում, վորի ընթացքում տրվում են հանրագումարներն այն ամենի, ինչ վոր մենք արել ենք, արբարում և նակազ և նշվում են գալիք աշխատանքի ուղիները։

Այս տարվա հաշվետու-վերընտրական կամպանիան պիտի անցնի 16-րդ կուսակցական համագումարի պատմական վորոշումների իրագործման նշանաբանի տակ։ Լայն ծավալված սոցիալիստական առաջխաղացման դրոշակի տակ—ահա ընդհանուր ընույթագիրն այն քաղաքական լոգունգների, վորոնց տակ պիտի անցնի վերընտրական կամպանիան,

Այս հոգվածում մենք մտադիր ենք անդրագաղաւալ այն սպեցիֆիկ առանձնահատկություններին, վորոնք վերընտրական կամպանիան պիտի ունենա ազգային շրջաններում, այն առանձին սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կենցաղային պայմաններին, վորոնք ընորոշ են արդ շրջանների համար։ Հարկավ, կամպանիայի հաջողության հիմնական պայմանը հանդիսանում է հենց մեթոդների ինդիվիդուալիզացիան, նայած այս կամ այն տեղական առանձնահատկություններին։ Ճկունությունը, քաղաքական ու շիմությունը, ուշագրությունը դեպի ազգային առանձնահատկությունները, ամբողջ տեղական հանգամանքների մանրակրկիտ հաշվառումը քաղաքական ուստանովկայի ճրշ-

գրառության հետ միասին—ահա թե ինչն է վրայում կամպանիայի ամենամեծ դրական արդյունքը։

Ազգային մարզերում դեռ ևս շատ ուժեղ են հին գասային-տոհնական ու ֆեոդալական հարաբերությունների մնացորդները, դեռ ևս ուժեղ է աղաթների տիրապետությունը, դեռ ևս մեծ է հոգերականության ազդեցությունը լեռնական յետամասացման մասաւ մասաների վրա։ Այդ յետամասացմանը սնվում է անգրադիության մեծ տոկոսով և կրօնական մոլեռանդությամբ։ Դեռ ևս վոչ ամեն տեղ և վոչ բոլորովին ազատագրված ելեռնեցի կինը։ Առանձին վայրերում նկատվում են տեղական շուինիզմի արտահայտություններ, ինչպես և նրա հակագրության մեծապետական շուինիզմի արտահայտություններ։ Կուլակությունը, հոգերականությունն և այլ հակախորհրդային տարրերը, ոգտագործելով դասային-տոհնական մնացորդների ազգային պայքարը, կրօնական մոլեռանդությունը, կատարում են իրենց հակախորհրդային, խուրդային աշխատանքը։ Յեվ կուլակ-մոլլայական տարրերի այդ հակախորհրդային գործընեւությունն ուժեղ է այնքան, վորքան շատ են մուտք գործում սոցիալիստական շինարարության տարրերը լեռնական մարզերը։

Դասակարգային թշնամին կատաղաբար գիմաղբում է մեր սոցիալիստական առաջընթացին, նա ոգտվում է և բնակչության անկուլատուրականությամբ և առվլսորհրդների աշխատանքում յեղած առանձին խեղաթյուրումներով, խօստորումներով ու քակասություններով, նաև նրանով, վոր տեղերում վոչ ամենուրեք խորհրդները կիրառում են բավականաչափ ճշգրիտ դասակարգային գիծ։ Սակայն ավելի մեծ ու լայն չափերով և սակարգային գիծ։ Սակայն ավելի մեծ ու լայն չափերով և զարգանում սոցիալիստական շինարարությունն ազգային մարզագուման սոցիալիստական առուներում։ Հենց Խորհրդային Միության գերում, լեռնական առուներում։ Հենց Խորհրդային Միության զարգացման ընթացքով ե, վոր ազգային մարզերը ներգրավագացման վերակառուցման ընդհանուր պրոցեսված են սոցիալիստական վերակառուցման կուսակցության և կառավագի մեջ։ Բավական և մատնանշել կուսակցության և կառավագության միջոցառումներից միայն մի քանիսը, վորպեսզի հարցության մողվել այդ քանում։

Գիգելոսի ելեկարոկայանի, Բակսանստրոյի, Փոքր կաբարգական ջրանցքի շինարարությունը, Ալխանչուրտի հովիտի վոռոգումը, մեքենա-տրակտորային կայանների կառուցումը, դաշ-

տաբուծական, անսանաբուծական և այգե-բանջարանոցային սովորողների ծավալումը, ցանքային տարածությունների ընդլայնումը, բերքատվության բարձրացումը, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության (մսի, պահածոյի, յեզիպտացորենի մշակման) ծավալումը, բնական հարստությունների մշակույթն և ոգտագործումը, դպրոցների, հիվանդանոցների, ճանապարհների և կամուրջների շինարարությունը—ահա միայն մի մասն այն միջոցառումների, վորոնք հենակետեր են ստեղծել ազգային մարզերի սոցիալիստական վերակառուցման համար, վորոնք (հենակետերը) ձեռք են բերվել Հոկտեմբերյան հեղափոխության և ազգային հարցում կուսակցության գլխավոր գիծը ձշությամբ կիրառելու հետևանքով։

Տնտեսության և կուլտուրայի մեջ սոցիալիստական տարրերի աճումը, հողաշինարարությունը, կոռպերացումը, վարկավորումը, տնտեսության կոլեկտիվ ձևերի մուծումը, տեղայնացումը և ապարատի մաքրումը, լեռնուհիների ազատազրության ոգնելը, միշտ շարք մեծ տնտեսական-կուլտուրական միջոցառումները—այս բոլորը առաջ մղեց յերկրամասի ազգային մարզերը կուլակության գեմ վճռականորեն պայքարելու, չքավոր-միջակ մասսաների նյութական սւ կուլտուրական մակարդակի վերելքի և նրանց քաղաքական ակտիվության բարձրացման ճանապարհով։

Ազգային մարզերի տնտեսա-կուլտուրական կացության աճման ասպարիզում մեր հաջողությունները, շնորհիվ կուսակցության և խորհրդների ձշորեն կիրառած լենինյան ազգային քաղաքականության և այն միջոցառումները, վորոնց նպատակն ե արագացնել հարձակումը առուի կուլակ և ավելի վրա՝ եկոնոմիկայի, քաղաքականության և իդեոլոգիայի բնագավառում, — վճռականորեն փշրում են նախկին դասային-տոհմական մասցորդները։ Նրանց հողի վրա տեղի յե ունենում առուի շերտավորումը, աճում ե չքավոր-միջակ մասսաների կազմվակերպվածությունն ընդդեմ կուլակության և հոգեորականության, — այն մասսաների, վորոնք ամենամեծ չափով յետամասց են յեղել և ճգմվել են առուի ստրկական հարաբերությունների շրջաներով, — սրվում ե դասակարգային պայքառու։

Ազգային մարզերում խորհրդների հիմնական խնդիրը հանդիսանում ե՝ զորահավաքել լեռնեցի աշխատավոր մասսաների

քաղաքական ակտիվությունը և համախմբել նրանց կուսակցության և խորհրդների շուրջը, 16-րդ կուսամագումարի և կենտկոմի ու կենտգործկոմի սեպտեմբերյան դիմումների շուրջը, հաջողությամբ կատարելու համար վերընտրությունները և հերթական տնտեսա-քաղաքական խնդիրները—հացամթերումները, աշնանացանը, կոլեկտիվացման ամրապնդումն և աճումը,—հաշվի առնելով սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները և անցյալի դասերը։ Վերընտրական կամպանիայից իբր հետևանք, պիտի ստացվի մի այնպիսի դրություն, յերբ ազգային մարզերում խորհրդները կդառնան առուի հասարակայնության խական կենտրոնը, մասսաների կազմակերպիչները սոցիալիստական շինարարության գործում, պրոլետարիատի դիկտատուրայի խսկական որգանները։

Այս բոլոր նախադրյաները ինքնին վորոշում են նաև այն նախապատրաստական միջոցառումների բնույթը, վորոնք պիտի կիրարկվեն ազգային մարզերում, վորպեսզի ապահովվի հաշվետու-վերընտրական կամպանիայի հաջողությունը։ Մարզկոմները, շրջանային և առուի խորհրդները և ազգային մարզերի բոլոր հասարակական կազմակերպությունները պետք ե անհապաղորեն սկսեն մասսայական ազիտացիոն աշխատանք, խորհրդների ընտրությունների խնդիրները պարզաբանելու համար։ Անհրաժեշտ ե ապահովել չքավորության, բատրակների և կոլխոզների ազգեցությունը աշխատանքի բոլոր ճակատամասերում։ Ընտրական թաղամասերը տեխնիկական կողմից պիտի կազմակերպվեն այնպես, վորպեսզի ապահովվի բոլոր ընտրողների լիակատար ներկայությունը։ Պետք ե ստեղծել այնպիսի պայմաններ, վորպեսզի հեշտացնել չքավորության, բատրակության ու կանանց նախընտրական ու վերընտրական ժողովներին գնալու հնարավորությունը, դրա համար գտնել սայլեր, շենքեր, ոգտագործել բոլոր միջոցները, վորպեսզի ապահովվել ընտրական ժողովներին գալը, կիրարկել բանավոր հրավերներն և ներկայանալու անհրաժեշտության պարզաբանումը։ Հաշվի առնելով կենցաղային պայմանները, պետք ե ստեղծել կանանց առանձին ընտրական թաղամասեր։ Խոսք ել չի կարող լինել այն մասին, վոր առուի ամբողջ հասարակայնությունը պետք ե ամենամեծ մասնակցություն ունենա բոլոր նախապատրաստական աշխատանքներում։ Մասսայական աշխատան-

քը պիտի տեղափոխել թաղամասերը, աները, դեպի աշխատավոր լեռնեցին և լեռնուհին:

Վորքան կարելի յէ, պետք ե յայնորեն կիրարկել չքափորության խմբակների և համաշքավորական ժողովները, միջակների ակտիվի ներգրավմամբ, լեռնեցի կանանց առանձին ժողովները: Պետք ե ամենավճռական կերպով խուսափել անցյալ վերընտրական կամպանիայի սխաներից, յերբ չքափորության ժողովները դառնում են ին համաքաղաքացիական հավաքներ, վորտեղ կույակությունն և հոգեսրականությունը հայտնաբերում են իրենց ազդեցությունը: Պետք ե խուսափել նաև գրան հակադիր սխալից, վորը նույնպես յեղել ե նախընթաց ընտրություններին, յերբ լինում են դեպքեր, վոր չքափորությունը խուսափում եր միջակներից, չեր հրավիրում միջակ ակտիվին և ժողովներում տալիս եր միայն չքափորական թեկնածություններ:

Զքափորության, բատրակության, յերիտասարդության ու կանանց մեջ մասսայական աշխատանքը պետք ե խորացնե այդ խմբակների գիտակցության մեջ կամպանիայի քաղաքական նշանակությունը, ապահովե նրանց ակտիվության հայտնաբերումը և արթնացնե նրանց մեջ դասակարգային ինքնագիտակցությունը:

Այդ նույն նպատակին ել պիտի յենթարկվի նաև ընտրական թաղամասերի անհրաժեշտ կազմակերպչական ու տեխնիկական կառուցվածքը: Թաղամասերի կառուցվածքի, վերը հիշված սկզբունքներից բացի, պետք ե տերրիտորիան բաժանել այնպես, վորպեսզի չեղոքացնել դասային-տոհմական կուլակային ազգեցությունները և մեծապես ուժեղացնել չքափորության, բատրակության ազգեցությունը: Պարզ լինելու համար պետք ե մատնանշել, վոր շատ հաճախ առւներում ամբողջ թաղամասերը բաղկացած են մի վորենե տոհմի անդամներից և յեթե ամբողջ ընտրական թաղամասը լինի այդպիսի թաղամասի սահմաններում, ապա այնտեղ ուժեղ կերպով պիտի զգացվի տոհմի ավագի ազգեցությունը: Յեզ հենց նրա համար, վորպեսզի վոչնչացնել այդ ազգեցությունը, վորը հիմնված ե ընտանեկան-տոհմական հոգեբանության վրա, — անհրաժեշտ ե մեր մատնանշած տերրիտորիալ բաժանումը:

Պետք ե հաջողեցնել, վորպեսզի հաշվետու-վերընտրական

կամպանիայում չկը կնվին անցյալում տեղ գտած ոպորտունիստական յերեսությները, վորոնք արտահայտվել են իբր տոհմական կան ու դասային պոչականությունն, կուլակների ու ազգական ների պաշտպանությունն, մասնավոր սեփականատիրական և տոհմային հարաբերությունների հողի վրա սկսությունը, «Ղոնախությունը», հյուրասիրությունը, կաշառելը, պրովակացիան, — այս բոլորը ինչպես անցյալում, նույնպես և հիմա, անկասկած, պետք ե մեյլան բերեն կուլակ-մոլլայական տարրերը: Պետք ե աշխատել թույլ չտալ նման յերեսությներ առաջիկա կամպանիայում:

Պետք ե ամենամանը կիտ կերպով չեղոքացնել կուլակության փորձը՝ անտեսել ընտրական որենսդրությունը: Ուստի պետք ե ցուցահանուվի ամենամանը կիտ ինսամք նրա համար, վորպեսզի ընտրական կոմիսիաներն ընտրվեն ինչպես հարկավոր ե: Ընտրական կոմիսիաների դասակարգային կազմը պիտի լինի այնպես, վորպեսզի նրանք հայտնաբերեն դասակարգային ուժեղ արթնություն: Կոմիսիաները պետք ե անհապաղորեն սկսեն ձայնազուրկների ցուցակները կազմելն, ըստ վորում կիրարկեն չքափորական խմբակների, կարմիր պարտիզանների, կոլխոզիկների և հասարակական կազմակերպությունների լայն կոլխոզիկների պատրակական կազմակերպությունների մեջ այդ ցուցակների քննության: Ամբողջ մասսայական գույքը այդ ցուցակների գննության մեջ թշնամի տարրերին և պաշտպանել աշխատավորներին:

Հարկավոր ե առանձնապես ուշադրություն դարձնել այն բանի վրա, վորպեսզի ընտրական կամպանիային ներդրակել լեռնուհիներին, վճռականորեն առաջ քաշելով նրանց խորհրդական դեկալավար աշխատանքի: Նույնպես հարկավոր ե մեծ ուշադրություն հատկացնել կոմսոմոլի մասնակցությանը վերընտրական կամպանիային, բարձրացնելով յերիտասարդության դերը: Ուսեթիայի և Աղիկեյի պայմաններում, վորտեղ բարձր ե կուլեկտիվացման տոկոսը, պետք ե ապահովել կոլխոզիկների ազգեցության ուժեղացումը ընտրական կոմիսիաներում և ամպողջ մասսայական աշխատանքում, հաշվետու-վերընտրական կամպանիայի բոլոր ետապներում:

Վերընտրությունների բոլոր հարցերը պետք ե մանրակըրկիտորեն մշակվեն պլենումներում, կոնֆերենցիաներում, ակտիվներում, ժողովներում և հավաքույթներում։ Յուրաքանչյուր ակտիվիստ պետք ե ստանա վորոշ բեռնվածություն և անձնական պատասխանատվություն կրե այն խմբակի կազմակերպման համար, վորտեղ նրան հանձնարարված ե աշխատել։ Միանդամայն ավելորդ կինի շեշտել, —քանի վոր այդ ինքն ըստ ինքան հասկանալի յե, —վոր ամբողջ ագիտացիոն-պարզաբանական աշխատանքը, ճիշտ այնպես, ինչպէս հաշվետու-վերընտրական ժողովները, —պետք ե տարկեն ընտրողների մայրենի լեզով։

Ամբողջ հաշվետու-վերընտրական կամպանիան պետք ե տարկի քաղաքական լայն լողունգների տակ և անցնի այն պարզայի ստուգման և քննադատական արժեքավորման նշանաբանով, թե վորքան ուղիղ և ժամանակին ե գործադրվել քաղաքական տնտեսական գիծը խորհրդների առողյա աշխատանքում։ Կամպանիան պետք ե ուժեղացնե աշխատավոր լեռնեցիների ուշադրությունը դեպի մեր յերկրի միջաղդային դրությունն ու նրա պաշտպանունակության ամբափնդումը։ Այստեղ զեկուցումների համար իբր նյութ կարող ե հանդիսանալ հեղափոխական շարժման աճումն Արևելքում։ Կարմիր բանակի հանդեպ հոգատարության արտահայտությունը կինի հասարակական ուշադրության ուժեղացումը դեպի շեֆության հարցերը և Կարմիր բանակի ազգային դուռը։

Հաշվետու-վերընտրական կամպանիայում մեծ տեղ պետք ե բռնե մասսաների ինտերնացիոնալ դաստիարակությունն և վճռական պայքարը աղջային թեքումների արտահայտությունների դեմ—թե տեղական և թե մեծապետական շովինդմի, վորն առավել վտանգավորն ե և ձեռնտու յե դասակարգային թշնամուն։ Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր ամենուրեք կարմիր թելի պես պիտի անցնի կուսակցության գլխավոր գծի հաստատուն կիրառումը և անխնա պայքարն սպորտունիզմի դեմ, «Ճախ խոտրումների և աջ թեքման, իբր գիխավոր վտանգի և դեպի սրանց հաշվետվողականության դեմ։ Հաշվետու-վերընտրական կամպանիան պետք ե տա ներթական տնտեսաքաղաքական խնդիրների—աշնանացանի, հացամթերումների, կութեկտիվացման ընդլայնման և այլն կատարման հանրագումար-

ները, հայանաբերե նրանց թերությունները, ինչպես և նշեգործնական ուղիներ նրանց հետագա հաջող անցկացման համար։


Պրոլետարիատի, լեռնեցի չքավորության ու բատրակության դասակարգային դիլքերի ամրապնդումը և կուլակ-մոլլայական հական որհը արդային տարրերի դիմադրության վճռական ձգմումը, ոցի լիստական շինարարության հաջող ծավալումը 16-րդ կուսամագումարի վորոշումների և կենտկոմի սեպտեմբերյան դիմումի հիմունքներով, ոսցմքության, հարվածայնության զարգացումը, կուլտուրական հեղափոխության, մասնավորապես ընդհանուր ուսուցման և անզրագիտության վերացման խնդիրների իրականացումը, աշխատավորների նյութական ու կուլտուրական կարիքների սպասարկման բարեկավումն և գյուղատնտեսության վերակառուցումը սոցիալիստական հիմունքով, կազմերի պատրաստումն և առաջքաշումը, լեռնուհիների ազատագրման ասպարիզում դաստիարակչական, քաղաքական-լուսավորական և կենցաղային աշխատանքի հետագա ծավալումը, պայքարը՝ խորհրդային ապարատն առողջացնելու և նրան մասսային մոտեցնելու համար, տեղայնացումը, առուխորհրդների աշխատանքի պարզացումն—ահա այն հիմնական մումնաները, վորոնց վրա պիտի բևեռի բոլոր աշխատավոր լեռնեցիների ուշադրությունը հաշվետու-վերընտրական կամպանիան։

Այստեղից ել բղխում են առվլուրհրդների այն ինդիրները, նրանց առաջադրված այն պահանջները, վորոնք պիտի դրվեն նակազներում, առովի հասարակայնության և աշխատավորական լայն մասսաների կողմից—հաշվետու-վերընտրական ժողովներում։ Խորհրդների առաջ խնդիր և դրվում՝ միանգամյն բացառիկ ուշադրություն կենտրոնացնել սոցիալիստական վերակառուցման, կուեկտիվացման ճշգրիտ և քաղաքականացեական պահես ուղիղ զարգացման վրա, վորը կամագիրության հիմունքով պիտի ընդգրկե չքավոր և միջակ տնտեսությունների մեծ մասսա։ Դրա հետ մեկտեղ պետք ե ըստ ամենայնի աջակցություն ցույց տալ արտադրական կոոպերացման ամենապարզ ձեերի հիմունքով անհատական չքավոր-միջակ տընտեսությունների վերեկըին։ Խորհրդները, կուսակցության դիրեկտիվներին միանգամյն համապատասխան, պետք ե առւլում անցկացնեն հողաշինարարությունը, ինչպես հարկն ե

ձեռնամուխ լինեն անասնաբուծական պրոբլեմի լուծմանը,
դարձնելով այն հարգածային:

Դասակարգային կովի սրված ու ավելի և ավելի զարգացող
պայմաններում, առուրում, մի առանձին նշանակություն է ըս-
տանում խորհրդների աշխատանքը չքավորության հետ, խօմ-
քակների և հատուկ ժողովների միջոցով։ Խորհրդակով պիտի
ծավալեն սոցիալ-կուլտուրական մեծ աշխատանք, նեղդրավե-
լով լեռնեցի կանանց սոցիալիստական շինարարության մեջ,
պայքարելով սոցիալ-կենցաղային հանցագործությունների ու
մասցորդների դեմ (դավիմ, բազմակիություն, արյան վրեժ,
աղջիկ փախցնելը)։ Ազգային մարզերի սոցիալիստական վերա-
կերպարանավորումը ամբողջ սրվածությամբ առաջ ե բերում
կուլտուրական շինարարության պրոբլեմը, ուստի և խորհրդ-
ները պիտի հաջողեցնեն ամենակարճ ժամանակամիջոցում բա-
րելավել անդրագիտության վերացման և ընդհանուր տարրա-
կան կրթ։ Եթյան գործը։

Նոր խորհրդների ամբողջ աշխատանքում, բոլոր միջոց-
ություններում պետք է անշեղ պայքար մղվի կուսակցության գըլ-
խավոր, ճշգրիտ գծի համար։ Խորհրդների ամբողջ աշխատան-
քը պիտի ընթանա կուլակության, ոպորտունիզմի, թեքուժ-
ների դեմ, յերկու ֆրոնտի վրա պայքարելով և բոլոր տնտե-
սաքաղաքական խնդիրները լավագույն կերպով կատարելու
տմբնամեծ հոգատարարությամբ։ Ազգային մարզերում խորհրդ-
ների վերընարական կամպանիան պետք է բեկման մոմենտ
լինի խորհրդների աշխատանքում։ Նոր խորհուրդները պիտի
գլխավորեն լեռնեցիների և լեռնուհների լայն աշխատավորա-
կան մասսաների աճող ակտիվությունը, նոր ձևով վերակա-
ռուցեն իրենց աշխատանքը, վորպեսզի խորհրդները մոտենան
մասսաներին և գառնան սոցիալիստական շինարարության հեր-
թական խնդիրների իրագործման իսկական կիրառողները։



39. 897

ԳԻՆՆ Ե Ց ԿՈՊ.

3079

639

ՏԱՐ

1/2